«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝ Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորական եզրակացություն

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն....1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն....2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն....3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն....4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Ընդհանուր տեղեկություններ «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ՓԲԸ-ի և նրա գործունեության մասին....5
2 Ընկերության գործառնական միջավայրը....5
3 Պատրաստման հիմունքները....6
4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ....15
5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին....16
6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ....17
7 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ....18
8 Հիմնական միջոցներ....20
9 Ոչ նյութական ակտիվներ....21
10 Տրամադրված վարկեր....21
11 Պաշարներ....22
12 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր....22
13 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ....24
14 Կանոնադրական կապիտալ....24
15 Վարձակալության գծով պարտավորություններ....25
16 Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների համեմատություն....25
17 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր....25
18 Ավանդային պարտավորություններ....26
19 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ....26
20 Վաճառքի ինքնարժեք....26
21 Իրացման ծախսեր....27
22 Ընդհանուր և վարչական ծախսեր....27
23 Գովազդային և շուկայավարման ծառայություններ....27
24 Այլ գործառնական եկամուտ....28
25 Շահութահարկ....28
26 Պայմանական դեպքեր և պարտավորություններ....29
27 Ֆինանսական ռիսկերի կառավարում....29
28 Կապիտալի կառավարում....33
29 Ֆինանսական գործիքների իրական արժեքը....33
30 Ֆինանսական գործիքների ներկայացում ըստ չափման կատեգորիաների....34
31 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր....35

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ՓԲԸ բաժնետիրոջը

Մեր կարծիքը

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ՓԲԸ (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական վիճակն առ 2024թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև Ընկերության՝ այդ ամսաթվին ավարտված տարվա՝ ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Աուդիտի առարկան

Մենք աուդիտի ենք ենթարկել Ընկերության ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն՝ առ 2024թ. դեկտեմբերի 31-ը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, և
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման էական քաղաքականությունն և այլ բացատրական տեղեկատվություն:

Կարծիքի հիմքը

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք կարծում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Անկախություն

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՍԽ Վարքագիրք») սկզբունքների և և էթիկական պահանջները, որոնք առնչվում են Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտին: Մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ Վարքագրքին համապատասխան:

«Փրայսուոթերհաուս Կուպերս Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2, «Գամար» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռ.՝ (37410) 512151, ֆաքս՝ (37410) 521000, www.pwc.com/am

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությանը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր աուդիտորական կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացում կամ ներքին հսկողության չարաշահում:

- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մենք պարտավոր ենք մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը դադարեցնի անընդհատության սկզբունքով գործունեությունը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, այդ թվում՝ բացահայտումները և այլն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են հիմնական գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվում է ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Ն. Կազազիշվիլի

Տնօրեն

27 մայիսի 2025թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

PricewaterhouseCoopers Armenia LLC

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	8	6,286,355	5,928,399
Ոչ նյութական ակտիվներ	9	910,177	753,188
Հիմնական միջոցների գծով կանխավճարներ		207,551	133,912
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		6,492	26,592
Տրամադրված վարկեր	10	-	6,242,861
Հետաձգված հարկային ակտիվ	25	66,550	125,364
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**7,477,125**	**13,210,316**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	11	3,284,357	2,690,610
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	12	1,760,585	487,821
Տրամադրված վարկեր	10	1,220,786	501,282
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	5,717,217	8,614,829
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**11,982,945**	**12,294,542**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**19,460,070**	**25,504,858**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Կանոնադրական կապիտալ	14	1,346,850	1,346,850
Չբաշխված շահույթ		8,841,218	15,944,395
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**10,188,068**	**17,291,245**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություններ	15	389,382	505,304
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**389,382**	**505,304**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություններ	15	115,922	104,359
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	17	7,164,849	5,926,457
Ընթացիկ հարկային պարտավորություն		1,507,332	1,519,907
Ավանդային պարտավորություններ	18	94,517	157,586
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**8,882,620**	**7,708,309**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**9,272,002**	**8,213,613**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**19,460,070**	**25,504,858**

Հաստատվել է հրապարակման համար Ընկերության ղեկավարության կողմից ստորագրվել է 2025թ. մայիսի 27-ին:

Արթուր Սահակյան
Գլխավոր տնօրեն

Գայանե Շառոյան
Գլխավոր հաշվապահ

Հազ. ՀՀ դրամ	**Ծան.**	**2024թ.**	**2023թ.**
Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ	19	37,171,609	34,993,544
Վաճառքի ինքնարժեք	20	(18,401,192)	(18,314,552)
Համախառն շահույթ		**18,770,417**	**16,678,992**
Այլ գործառնական եկամուտ	24	426,298	1,170,299
Իրացման ծախսեր	21	(3,741,235)	(3,623,545)
Ընդհանուր և վարչական ծախսեր	22	(2,233,325)	(1,996,909)
Գովազդային և շուկայավարման ծառայություններ	23	(2,175,183)	(2,261,267)
Այլ օգուտ/(վնաս), զուտ		(491,619)	(268,959)
Գործառնական շահույթ		**10,555,353**	**9,698,611**
Ֆինանսական եկամուտ		588,317	500,573
Ֆինանսական ծախսեր	15	(57,965)	(13,703)
Շահույթ մինչև հարկումը		**11,085,705**	**10,185,481**
Շահութահարկի գծով ծախս	25	(2,288,882)	(2,023,030)
ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ		**8,796,823**	**8,162,451**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ		**8,796,823**	**8,162,451**

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդն առ 1 հունվարի 2023թ.	14	**1,009,875**	**13,118,919**	**14,128,794**
Կանոնադրական կապիտալի ճշգրտում	14	336,975	(336,975)	**-**
Տարվա շահույթ		**-**	**8,162,451**	**8,162,451**
Ընդամենը 2023թ. համապարփակ ֆինանսական արդյունք		**-**	**8,162,451**	**8,162,451**
Հայտարարված շահաբաժիններ		-	(5,000,000)	**(5,000,000)**
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.	14	**1,346,850**	**15,944,395**	**17,291,245**
Տարվա շահույթ		**-**	**8,796,823**	**8,796,823**
Ընդամենը 2024թ. համապարփակ ֆինանսական արդյունք		**-**	**8,796,823**	**8,796,823**
Հայտարարված շահաբաժիններ		-	(15,900,000)	**(15,900,000)**
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.	14	**1,346,850**	**8,841,218**	**10,188,068**

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Շահույթ մինչև հարկումը		11,085,705	10,185,481
Ճշգրտումներ.			
Հիմնական միջոցների մաշվածություն և արժեզրկում	20,21,22,23	1,100,398	956,471
Այլ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա և արժեզրկում	20,21,22,23	122,981	88,880
Հիմնական միջոցների դուրսգրում		(32,954)	153,521
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկում		16,274	28,117
Ավանդային պարտավորությունների փոփոխություն		(63,069)	(121,389)
Ֆինանսական եկամուտ		(588,317)	(500,573)
Ֆինանսական ծախսեր		57,965	13,703
Արտարժույթի փոխարկումից տարբերություններ		279,606	(248,835)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները		**11,978,589**	**10,555,376**
Պաշարների (աճ) / նվազում		(593,747)	30,983
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի աճ		(1,268,938)	(67,743)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքի աճ		1,238,392	1,804,953
Փոփոխություններ շրջանառու կապիտալում		**(624,293)**	**1,768,193**
Վճարված շահութահարկ		(2,242,643)	(1,835,332)
Ստացված տոկոսային եկամուտ		654,034	504,340
Վճարված տոկոսներ		(57,965)	(13,703)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		**9,707,722**	**10,978,874**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(1,499,039)	(978,242)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(279,970)	(269,086)
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ		**(1,779,009)**	**(1,247,328)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Վարձակալության գծով պարտավորությունների մայր գումարի մարում	16	(104,359)	(101,487)
Կապակցված կողմին տրամադրված վարկեր	10	(838,720)	-
Կապակցված կողմին տրված վարկերի մարում	10	6,018,262	-
Վճարված շահաբաժիններ	14	(15,900,000)	(5,000,000)
Ֆինանսական գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ		**(10,824,817)**	**(5,101,487)**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(1,508)	235
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	**13**	**8,614,829**	**3,984,535**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	**13**	**5,717,217**	**8,614,829**

1 Ընդհանուր տեղեկություններ «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ՓԲԸ-ի և նրա գործունեության մասին

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՍԽ-ի կողմից հրապարակված Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն, («ՖՀՄՍ Հաշվապահական Ստանդարտներ»), «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝«Ընկերություն») համար:

Ընկերությունը գրանցվել և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ «ՀՀ»): Ընկերությունը փակ բաժնետիրական ընկերություն է՝ սահմանափակված իր բաժնետոմսերով, և ստեղծվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության անմիջական մայր ընկերությունն է եղել Նիդեռլանդների Թագավորությունում հիմնադրված CC Beverages Holdings II BV-ն: Ընկերության վերջնական վերահսկողությունն իրականացվում է Coca-Cola Hellenic Bottling Company S.A.- ի կողմից, որը հիմնվել է Շվեյցարիայում (2013թ. -ից): 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության 100% բաժնետերն է հանդիսացել CC Beverages Holdings II BV ընկերությունը:

2025 թվականի մայիսի 20-ին Ընկերությունը փոխել է անվանումը «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Արմենիա»-ից «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի:

Հիմնական գործունեությունը. Ընկերության հիմնական բիզնես գործունեությունը ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչքների ներմուծումը, իրացումը և արտադրությունն է ՀՀ տարածքում: Ընկերության արտադրական օբյեկտները գտնվում են Երևանում, ՀՀ:

Իրավաբանական հասցեն և գործունեության վայրը. Ընկերության գրանցման հասցեն է՝ ՀՀ, Երևան, Թբիլիսյան խճուղի, 8/3 շենք, 0052:

Ներկայացման արժույթ: Սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (այսուհետև՝ «ՀՀ դրամ»), եթե այլ կերպ նշված չէ:

2 Ընկերության գործառնական միջավայրը

Հայաստանի Հանրապետություն. Հայաստանի Հանրապետության տնտեսությունը ցուցաբերում է զարգացող շուկաներին բնորոշ որոշակի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական դաշտը շարունակում է զարգանալ և ենթարկվել հաճախակի փոփոխությունների, և կարող է ունենալ տարաբնույթ մեկնաբանումներ, տես Ծան. 26:

Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմը տարբեր ուղղություններով ազդեցություն է ունեցել ՀՀ տնտեսության վրա: Մի կողմից, Հայաստանը դարձել է տասնյակ հազարավոր այցելուների ժամանակավոր բնակության վայր և տնտեսական հետաքրքրությունների եզակի կենտրոն, ինչը, մասնավորապես, լրացուցիչ հնարավորություններ է ստեղծում ֆինանսական գործառնությունների համար: Ավելին, Ռուսաստանի տնտեսությունում առաջանում են ազատ շուկայական սեգմենտներ, որոնք լայն հնարավորություն են ընձեռում արտահանումը խթանելու և ՀՀ-ից վերաարտահանման գործառնություններ իրականացնելու համար: Ավելին, Հայաստանի տնտեսական համակարգի վրա միանշանակ ազդում են Ռուսաստանի Դաշնության դեմ կիրառվող պատժամիջոցները: Բացի այդ, Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի ազդեցությունը կարելի է դիտարկել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի հարթություններում: Հայկական արժույթը շարունակել է արժևորվել 2024թ. , ինչը հիմնականում պայմանավորված է եղել հայաստանյան շուկա արտարժույթի մեծածավալ փոխանցումներով:

2022 թվականի սկզբին Հայաստանի տնտեսությունը շարունակել է դրսևորել դրական դինամիկա՝ համաճարակի և Լեռնային Ղարաբաղում պատերազմից հետո վերականգնման ժամանակաընթացքում: Այս միտումը զգալիորեն խթանվել է նաև՝ պայմանավորված Ռուսաստանի և Ուկրաինայի միջև պատերազմի հետևանքով ՌԴ բազմաթիվ քաղաքացիների՝ Հայաստան տեղափոխմամբ: Այս ներհոսքը մեծապես խթանել է Հայաստանի տնտեսությունը և նպաստել է Ընկերության գործունեության զարգացմանը՝ հաշվի առնելով առաջացած բարձր գնողունակությունը և Ընկերության ապրանքատեսակների հետ ծանոթ լինելու հանգամանքը: Այնուամենայնիվ, 2022թ. դեկտեմբերին

Լեռնային Ղարաբաղի շրջափակումը հսկայական բացասական ազդեցություն թողեց Հայաստանի տնտեսական, ինչպես նաև քաղաքական իրավիճակի վրա:

2 Ընկերության գործառնական միջավայրը (շարունակություն)

2023թ. սեպտեմբերին Ադրբեջանի սանձազերծած պատերազմից հետո ավելի քան հարյուր հազար մարդ՝ այսինքն, Լեռնային Ղարաբաղի գրեթե ողջ բնակչությունը, մեկ շաբաթվա ընթացքում արտագաղթեց Հայաստան: Ըստ այդ, որպես տարածաշրջան, Լեռնային Ղարաբաղը Հայաստանի համար կորուստ հանդիսացավ, այդ թվում՝ ձևավորված տնտեսական կապերի առումով:

Ֆինանսական շուկաները շարունակում են մնալ անկայուն և բնութագրվում են գների հաճախակի զգալի տատանումներով և առևտրային սփրեդի աճով:

Այս իրադարձությունները կարող են հետագա էական ազդեցություն ունենալ Ընկերության հետագա գործունեության և ֆինանսական վիճակի վրա, որոնց ազդեցությունը դժվար է կանխատեսել: Ապագա տնտեսական և կարգավորող միջավայրը և դրա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել ղեկավարության ներկայիս ակնկալիքներից:

3 Պատրաստման հիմունքները

Պատրաստման հիմքը. Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՄԽ կողմից հրապարակված՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») , պահանջներին համապատասխան («ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ»), սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության էական սկզբունքները ներկայացված են ստորև: Բացի 2024թ. հունվարի 1-ից գործող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններից, այս քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ, եթե այլ բան նշված չէ:

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար պահանջվում են հաշվապահական հաշվառման էական գնահատումներ: Բացի այդ, Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ ղեկավարությանն անհրաժեշտ է առաջնորդվել իր դատողություններով: Այն ոլորտները, որոնք ենթադրում են դատողությունների կամ բարդության ավելի բարձր աստիճան, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատականները էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են Ծանոթագրություն 4-ում:

Արտարժույթի փոխարկում. Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Ընկերության հիմնական գործունեության իրականացման տնտեսական միջավայրի արժույթն է: Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և Ընկերության հաշվետվությունների ներկայացման արժույթը ՀՀ ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը:

Դրամական ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ՀՀ ԿԲ») պաշտոնական փոխարժեքով: Գործարքների վճարումները կատարելու և դրամական ակտիվները և պարտավորությունները ՀՀ ԿԲ-ի՝ տարեվերջի պաշտոնական փոխարժեքով ֆունկցիոնալ արժույթի փոխարկելու արդյունքում ստացված՝ արտարժույթի փոխարկումից օգուտը կամ վնասը ճանաչվում է «այլ օգուտ/ (վնաս), զուտ» տողում: Տարեվերջի փոխարժեքով փոխարկումը չի կիրառվում ոչ դրամական հոդվածների նկատմամբ, որոնք չափվում են սկզբնական արժեքով: Արտարժույթով արտահայտված և իրական արժեքով չափված ոչ դրամական հոդվածները, ներառյալ բաժնեմասնակցային ներդրումները փոխարկվում են իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ հաստատված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված և իրական արժեքով չափվող ոչ դրամական հոդվածների վրա արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը գրանցվում է որպես իրական արժեքի շահույթի կամ վնասի մաս:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով արտահայտված մնացորդների փոխարկման համար օգտագործվող հիմնական փոխարժեքներն են՝ 1 ԱՄՆ դոլար = 396.56 ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ին՝ 1 ԱՄՆ դոլար = 404.79 ՀՀ դրամ), 1 Եվրոպական միության արժույթ («Եվրո») = 413.89 ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31՝ 1 Եվրո = 447.9 ՀՀ դրամ), 1 Ռուսական ռուբլի («ՌԴ Ռուբլի ») 3.71 ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31՝ 1 ՌԴ ռուբլի = 4.5 ՀՀ դրամ):

3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

Հիմնական միջոցներ Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման պահուստը, եթե վերջինս պահանջվում է: Վերանորոգման և պահպանման գծով ընթացիկ ծախսումները ծախսագրվում են, երբ դրանք տեղի են ունենում: Հիմնական միջոցների միավորների խոշոր հիմնամասերի կամ բաղադրիչների փոխարինման ծախսումները կապիտալացվում են, իսկ փոխարինված մասը դուրս է գրվում:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ղեկավարությունը գնահատում է, թե արդյոք առկա է հիմնական միջոցների արժեզրկման հատկանիշ: Եթե որևէ նման հատկանիշ գոյություն ունի, ղեկավարությունը գնահատում է փոխհատուցվող գումարը, որը որոշվում է որպես հետևյալ երկու արժեքներից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում ակտիվի համար ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է (անհրաժեշտության դեպքում), եթե տեղի են ունեցել գնահատումներում փոփոխություններ, որոնք կիրառվել են՝ որոշելու համար ակտիվի օգտագործման արժեքը կամ իրական արժեքը՝ հանած վաճառքի ծախսերը:

Հիմնական միջոցների օտարումից շահույթը կամ վնասը որոշվում է որպես դրանց իրացումից ստացված հասույթի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում:

Մաշվածություն. Հողի և անավարտ շինարարության համար մաշվածություն չի հաշվարկվում: Հիմնական միջոցների այլ միավորների մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդի կիրառմամբ՝ բաշխելով դրանց սկզբնական արժեքը մինչև մնացորդային արժեքը՝ օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

	Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված տարիներով
Շենքեր	12-40
Մեքենա-սարքավորումներ	3-20
Փոխադրամիջոցներ	5-8
Մարկետինգային սարքավորումներ	2-15
Այլ	2-12

Ակտիվի մնացորդային արժեքն այն գնահատված գումարն է, որը Ընկերությունը ներկա պահին կստանար ակտիվի օտարումից՝ հանած օտարման գնահատված ծախսումները, եթե ակտիվն արդեն լիներ դրա օգտակար ծառայության վերջում ակնկալվող տարիքի և վիճակի: Ակտիվների մնացորդային արժեքները և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ոչ նյութական ակտիվներ. Ընկերության ոչ նյութական ակտիվներն ունեն սահմանափակ օգտակար ծառայություն և հիմնականում ներառում են կապիտալացված համակարգչային ծրագրակազմ: Կապիտալիզացված ծախսերը ներառում են աշխատակիցների վճարումների գծով ծախսերը՝ ծրագրակազմի մշակման անձնակազմին կատարված վճարումների գծով, և վերադիր ծախսերը՝ համապատասխան մասով: Համակարգչային ծրագրակազմի հետ կապված բոլոր մյուս ծախսերը, օրինակ. սպասարկման, ծախսագրվում են այն ժամանակ, երբ դրանք առաջանում են:

Ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով՝ դրանց օգտակար ծառայության ընթացքում.

	Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված տարիներով
Ներքին մշակված ծրագրակազմ	10-15
Ձեռք բերված ծրագրակազմի լիցենզիաներ	4

Արժեզրկման դեպքում ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև հետևյալ մեծություններից նվազագույնը՝ օգտագործման արժեք կամ իրական արժեք՝ հանած օտարման ծախսերը:

3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

Ֆինանսական գործիքներ. հիմնական չափման մոտեցումները. Իրական արժեքը այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության դիմաց, շուկայի մասնակիցների միջև բնականոն գործարքի արդյունքում: Իրական արժեքի ամենաարժանահավատ վկայություն է հանդիսանում ակտիվ շուկայում գնանշվող գինը: Ակտիվ շուկան այն շուկան է, որում շարունակական հիմունքով տեղի են ունենում ակտիվի կամ պարտավորության հետ կապված գործարքները՝ անհրաժեշտ գնային տեղեկատվություն ապահովելու համար բավարար հաճախականությամբ և ծավալով:

Ակտիվ շուկայում շրջանառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը չափվում է որպես առանձին ակտիվի կամ պարտավորության գնանշվող շուկայական գնի և Ընկերության կողմից պահվող գործիքների քանակության արտադրյալ: Նշվածը տեղի է ունենում նույնիսկ այն դեպքում, երբ շուկայի սովորական օրական առքուվաճառքի ծավալը բավարար չէ այդ քանակությունը կլանելու համար, և մեկ գործարքում դիրքը վաճառելու հայտի ներկայացումը կարող է ազդել գնանշվող գնի վրա:

Գնահատման մեթոդները, ինչպիսիք են զեղչված դրամական հոսքերի մոդելները կամ վերջերս կատարված «պարզած ձեռքի հեռավորության գործարքները» կամ ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունների ֆինանսական տվյալների ստացման վրա հիմնված մոդելները, օգտագործվում են որոշելու այն ֆինանսական գործիքների իրական արժեքը, որոնց համար արտաքին շուկայական գնանշման տեղեկատվությունը հասանելի չէ: Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի, հետևյալ կերպ՝ (i) մակարդակ 1՝ չափումներ ակտիվ շուկայում նույնական ակտիվների կամ պարտավորությունների գնանշվող գներով (չճշգրտվող), (ii) մակարդակ 2՝ չափման գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալներն ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտելի են, (iii) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալներ): Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև փոխանցումները համարվում են տեղի ունեցած հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Գործարքի հետ կապված ծախսումները լրացուցիչ ծախսումներն են, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական գործիքի ձեռքբերմանը, թողարկմանը կամ օտարմանը: Լրացուցիչ ծախսումն այն ծախսումն է, որը կազմակերպությունը չէր կրի, եթե գործարքը տեղի չունենար: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են գործակալներին (ներառյալ՝ որպես վաճառքի գործակալ հանդես եկող աշխատակիցներին), խորհրդատուներին, միջնորդներին, դիլերներին վճարված միջնորդավճարները և կոմիսիոն վճարները, կարգավորող մարմինների և արժեթղթերի փոխանակման գործակալությունների կողմից գանձումները, սեփականության իրավունքի փոխանցման հետ կապված հարկերը և վճարները: Գործարքի հետ կապված ծախսումները չեն ներառում պարտատոմսերի հավելավճարները և զեղչերը, ֆինանսական ծախսերը, ներքին վարչական կամ պահպանման ծախսերը:

Ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական գործիքը գնահատվել է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած հաշվեգրված տոկոսները և ֆինանսական ակտիվների համար՝ հանած ակնկալվող պարտքային կորուստների գծով ցանկացած նվազեցում: Հաշվեգրված տոկոսները ներառում են սկզբնական ճանաչման ժամանակ գործարքի հետ կապված հետաձգված ծախսումների և հավելավճարի կամ զեղչի ամորտիզացիան՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաշվեգրված տոկոսային եկամուտը և հաշվեգրված տոկոսային ծախսը, ներառյալ հաշվեգրված արժեկտրոնը և ամորտիզացված զեղչը կամ հավելավճարը (ներառյալ՝ առաջացման պահին հետաձգված վճարները, եթե կան այդպիսիք) առանձին չեն ներկայացվում և ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության համապատասխան հոդվածի հաշվեկշռային արժեքում:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի կամ տոկոսային ծախսի բաշխման այնպիսի մեթոդ է, որը հանգեցնում է հաշվեկշռային արժեքի նկատմամբ կիրառվող հաստատուն պարբերական տոկոսադրույքի (արդյունավետ տոկոսադրույք): Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ համապատասխան դեպքերում ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները (չներառելով ապագա պարտքային կորուստները) զեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական գործիքի զուտ հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը զեղչում է փոփոխական տոկոսադրույք ունեցող գործիքների դրամական միջոցների հոսքերը մինչև հաջորդ տոկոսադրույքի վերագնանշման ամսաթիվը, բացառությամբ այն հավելագնի կամ զեղչի, որն արտացոլում է գործիքում սահմանված լողացող տոկոսադրույքի կամ շուկայական դրույքներով չսահմանված այլ փոփոխականների նկատմամբ վարկային սփրեդը: Այդպիսի պարգևավճարները կամ զեղչերն ամորտիզացվում են գործիքի ողջ գործողության ակնկալվող ժամանակահատվածի ընթացքում:

3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

Ներկա արժեքի հաշվարկումը ներառում է պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր վճարները, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասն են կազմում:

Ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող Ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Բոլոր մյուս ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ ճշգրտված գործարքի հետ կապված ծախսումներով: Սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքի լավագույն վկայությունն է գործարքի գինը: Սկզբնական ճանաչման ժամանակ շահույթ կամ վնաս ճանաչվում է միայն այն ժամանակ, երբ կա իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերություն, որը կարող է ապացուցվել միևնույն գործիքում դիտելի ընթացիկ շուկայական այլ գործարքներով կամ գնահատման մեթոդով, որի ելակետային տվյալները ներառում են միայն դիտելի շուկայական տվյալները: Սկզբնական ճանաչումից հետո ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներում ներդրումների գծով ճանաչվում է ակնկալվող պարտքային կորուստ անմիջապես հանգեցնելով հաշվապահական վնասի:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. չափման կատեգորիաները. Ընկերությունը ֆինանսական ակտիվները դասակարգում է ամորտիզացված արժեքով:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Բիզնես մոդել. Բիզնես մոդելն արտացոլում է այն մեթոդը, որի միջոցով Ընկերությունը կառավարում է իր ակտիվները՝ դրամական հոսքերի հավաքագրման նպատակով. արդյո՞ք Ընկերության նպատակն է՝ (i) ակտիվներից հավաքագրել բացառապես պայմանագրային դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով»), թե (ii) ակտիվներից հավաքագրել և՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը, և՛ ակտիվների վաճառքից առաջացող դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման և վաճառքի նպատակով»), կամ, եթե (i) կամ (ii) պարբերությունները կիրառելի չեն, ֆինանսական ակտիվները դասակարգվում են «այլ» բիզնես մոդելի և չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Բիզնես մոդելը որոշվում է ակտիվների խմբի համար (պորտֆելի մակարդակով), հիմնվելով այն գործողությունների բոլոր պատշաճ ապացույցների վրա, որոնք Ընկերությունը մտադիր է իրականացնել գնահատման ամսաթվի դրությամբ առկա պորտֆելի համար սահմանված նպատակին հասնելու համար:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. դրամական միջոցների հոսքերի բնութագրերը. Եթե բիզնես մոդելը նախատեսում է ակտիվների պահում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի ստացման կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի և վաճառքի համար, ապա Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսի վճարումներ: Նման գնահատումն իրականացնելիս՝ Ընկերությունը հաշվի է առնում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են բազային վարկային համաձայնագրին, այսինքն՝ տոկոսները ներառում են միայն պարտքային ռիսկը, փողի ժամանակային արժեքը, այլ բազային պարտքային ռիսկերը և շահույթի մարժան:

Միայն մայր գումարի և տոկոսի վճարումների գնահատումը կատարվում է ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ և հետագայում այն չի վերանայվում:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում. ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստ. Ընկերությունը կանխատեսումային հիմունքով գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների, ինչպես նաև վարկային պարտավորությունների և ֆինանսական երաշխիքների պայմանագրերի գծով հնարավոր ակնկալվող պարտքային կորուստները: Ընկերությունը գնահատում է պարտքային գործիքների հետ կապված ակնկալվող պարտքային կորուստը և ճանաչում է կորստի պահուստը հաշվետու յուրաքանչյուր ամսաթվի դրությամբ: Ակնկալվող պարտքային կորուստների գնահատումը արտացոլում է. i) անաչառ և հավանականությամբ կշռված գումարը, որը որոշվում է հնարավոր արդյունքների տիրույթի գնահատման միջոցով. (ii) փողի ժամանակային արժեքը, և (iii) տեղի ունեցած իրադարձությունների, ընթացիկ պայմանների և կանխատեսվող ապագա տնտեսական պայմանների վերաբերյալ ողջ հիմնավոր և հավաստի տեղեկությունները, որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի են առանց անհարկի միջոցների և ռեսուրսների ծախսման:

3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, և տրված փոխառությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են՝ նվազեցված ակնկալվող պարտքային կորուստի:

Ընկերությունը ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հետևյալ ֆինանսական գործիքների վերաբերյալ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր
- Տրամադրված վարկեր

Ակնկալվող պարտքային կորուստները կորստի պահուստի միջոցով պետք է չափվեն հետևյալ մեծություններով.

- 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, այսինքն՝ ակտիվի ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք կարող են առաջանալ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում ֆինանսական գործիքի դեֆոլտի իրադարձությունների արդյունքում, (ներկայացվում է որպես Փուլ 1), կամ
- Ակնկալվող պարտքային կորուստներ ակտիվի ողջ ժամկետի ընթացքում, որոնք կարող են առաջանալ ֆինանսական գործիքի ողջ տևողության ընթացքում բոլոր դեֆոլտի իրադարձությունների արդյունքում (ներկայացվում է որպես Փուլ 2 և Փուլ 3):

Ակնկալվող պարտքային կորուստների չափման համար Ընկերությունը կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցում, որն օգտագործում է ակտիվի տևողության ողջ ընթացքում ակնկալվող պարտքային կորուստի պահուստ բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար (Ծանոթագրություն 12):

Ֆինանսական ակտիվների դուրսգրում. Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասամբ դուրս են գրվում այն ժամանակ, երբ Ընկերությունը սպառել է դրանց վերականգնման բոլոր գործնական հնարավորությունները և եզրակացրել է, որ չկան այդպիսի ակտիվների վերականգնման հիմնավորված ակնկալիքներ: Դուրսգրումն իրենից ներկայացնում է ակտիվի ապաճանաչում: Ընկերությունը կարող է դուրս գրել դեռևս հարկադիր բռնագանձման գործընթացում գտնվող ֆինանսական ակտիվները, այն դեպքում, երբ Ընկերությունը փորձում է բռնագանձել պայմանագրային պարտավորության գումարները՝ առանց վերականգնման ողջամիտ ակնկալիքի:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչում. Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ. (ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ (բ) Ընկերությունը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ (i) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները կամ (ii) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Վերահսկողությունը պահպանվում է, եթե գործընկերը չունի չկապակցված երրորդ կողմին ակտիվը ամբողջությամբ վաճառելու հնարավորություն՝ առանց վաճառքի սահմանափակումներ կիրառելու:

Ֆինանսական ակտիվների փոփոխություն. Ֆինանսական ակտիվի փոփոխությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվի դրամական միջոցների հոսքերը կարգավորող պայմանագրային պայմանները վերանայվում են կամ այլ կերպ փոփոխվում ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման և մարման ժամկետի միջև ընկած ժամանակահատվածում: Փոփոխությունն ազդում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարի և/կամ ժամանակի վրա՝ անմիջապես կամ ապագա ամսաթվով:

Ֆինանսական պարտավորությունների չափման կատեգորիաներ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող:

3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

Ֆինանսական պարտավորություններ. ապաճանաչում. Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են դրանց մարման պարագայում (այսինքն, երբ պարտավորությունը կատարվում է, կամ պայմանագրով նշված պարտավորությունը դադարում է կամ սպառվում է դրա իրականացման ժամկետը):

Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված ու վճարման ենթակա հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական գործիքներ. հաշվանցում. Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և զուտ գումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ առկա է ճանաչված գումարները հաշվանցելու համար իրավաբանորեն ամրագրված իրավունք և կա մտադրություն կամ մարելու զուտ արժեքը, կամ՝ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը: Այդ հաշվանցման իրավունքը (ա) չպետք է կախված լինի ապագա իրադարձությունից և (բ) պետք է իրավաբանական ուժ ունենա բոլոր հետևյալ հանգամանքներում՝ (i) բնականոն գործունեության ընթացքում, (ii) դեֆոլտի դեպքում և (iii) անվճարունակության կամ սնանկության դեպքում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են առձեռն դրամական միջոցները, բանկերում պահվող ցպահանջ ավանդները և այլ կարճաժամկետ բարձր իրացվելիություն ունեցող ներդրումները՝ երեք ամիս կամ դրանից պակաս սկզբնական մարման ժամկետով: Դրամական միջոցները և դրամական միջոցների համարժեքները հաշվառվում են ԱՀ-ում, քանի որ. (i) դրանք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով, և այդ դրամական միջոցների հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսագումարի վճարում, և (ii) դրանք որոշված չեն որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Բացառապես օրենսդրությամբ պարտադիր բնութագրերը, ինչպես օրինակ՝ որոշ երկրներում գործող՝ պարտավորություններից ազատման օրենսդրությունը, ազդեցություն չեն ունենում միայն մայր գումարի և տոկոսագումարի թեստի վրա, եթե դրանք ներառված չեն պայմանագրային պայմաններում, որպեսզի այդ բնութագիրը կիրառվի նույնիսկ այն դեպքում, եթե օրենսդրությունը հետագայում փոխվի:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր. Առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագա չափումը իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր. Առևտրային կրեդիտորական պարտքերը հաշվեգրվում են, երբ գործընկերը կատարում է պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները, և չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարձակալության գծով պարտավորություններ. Վարձակալության պայմանագրերից բխող պարտավորությունները սկզբնական ճանաչման պահին չափվում են ներկա արժեքով: Վարձակալության գծով պարտավորությունները ներառում են հետևյալ վարձակալության վճարների զուտ ներկա արժեքը.

- հաստատուն վճարներ (ներառյալ, ըստ էության, հաստատուն վճարումները) հանած ստացման ենթակա վարձակալության խրախուսումները,
- փոփոխական վարձակալության վճար՝ հիմնված ինդեքսի կամ դրույքաչափի վրա, որը սկզբնապես չափվում է մեկնարկի ամսաթվի ինդեքսի կամ դրույքաչափի միջոցով, և վարձակալության դադարեցման համար տույժերի վճարումներ, եթե վարձակալության ժամկետը անդրադառնում է այդ օպցիոնն իրականացնող Ընկերությանը:

Վարձակալության երկարաձգման և դադարեցման օպցիոնները նախատեսված են Ընկերության մի շարք պայմանագրերում: Այս պայմաններն օգտագործվում են Ընկերության գործունեության մեջ օգտագործվող ակտիվները կառավարելիս առավելագույն գործառնական ճկունություն ապահովելու համար:

Երկարաձգման օպցիոնները (կամ դադարեցման օպցիոններին հաջորդող ժամկետները) ներառվում են վարձակալության ժամկետում միայն այն դեպքում, եթե առկա է ողջամիտ վստահություն, որ վարձակալությունը երկարաձգվելու է (կամ չի դադարեցվելու): Պարտավորության գնահատումը ներառում է նաև վարձակալության վճարներ, որոնք կկատարվեն որպես երկարաձգման օպցիոնների իրագործման մաս, եթե բավարար վստահություն կա, որ վարձակալությունը կերկարաձգվի:

3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

Վարձակալության վճարները զեղչվում են՝ օգտագործելով վարձակալության պայմանագրով ենթադրվող տոկոսադրույքը: Եթե այս դրույքաչափը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, ինչը, որպես կանոն, տեղի է ունենում Ընկերության մոտ առկա վարձակալության պայմանագրերի դեպքում, ապա Ընկերությունն օգտագործում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, որը այն դրույքաչափն է, որով Ընկերությունը կարող էր համանման ժամանակահատվածում և համանման ապահովությամբ ներգրավել փոխառու միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեին համանման տնտեսական պայմաններում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի արժեքին համարժեք ակտիվ ձեռք բերելու համար:

Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը որոշելու համար Ընկերությունը.

- հնարավորության դեպքում, որպես նախնական տեղեկատվություն օգտագործում է վերջերս երրորդ անձի կողմից ստացված ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվությունը և ճշգրտում է այն, հաշվի առնելով ֆինանսավորումը ստանալու պահից հետո տեղի ունեցած ֆինանսավորման պայմանների փոփոխությունները,
- օգտագործում է ձևավորման այնպիսի մոտեցում, որի դեպքում հաշվարկը սկսվում է առանց ռիսկի տոկոսադրույքից, որը ճշգրտվում է պարտքային ռիսկի չափով, և
- կատարում է ճշգրտումներ հաշվի առնելով վարձակալության պայմանագրի առանձնահատկությունները, օրինակ, վարձակալության ժամկետը, երկիրը, արժույթը և ապահովությունը:

Վարձակալության վճարները բաժանվում են պարտավորությունների հիմնական գումարի և ֆինանսական ծախսերի: Ֆինանսական ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում վարձակալության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում՝ յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի վրա հաստատուն պարբերական տոկոսադրույքն ապահովելու համար:

Շահութահարկ. Ֆինանսական հաշվետվություններում շահութահարկը ներկայացվում է համաձայն օրենսդրության, որն, ըստ էության, գործում է կամ ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ անմիջապես սեփական կապիտալում, քանի որ վերաբերում է այնպիսի գործարքների, որոնք տվյալ կամ այլ ժամանակաշրջանում ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ անմիջապես սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկն այն գումարն է, որը ենթակա է վճարման կամ հարկային մարմիններից փոխհատուցման և վերաբերում է ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթներին կամ վնասներին: Շահութահարկից տարբերվող այլ հարկերը, ճանաչվում են այլ օգուտ/(վնաս)-ում:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են՝ կիրառելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը հետագա տարիներին փոխանցվող հարկային վնասի և ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առկա են ֆինանսական հաշվետվությունների նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և հարկային նպատակով օգտագործվող արժեքները համեմատելիս: Համաձայն սկզբնական ճանաչման վերաբերյալ բացառության, հետաձգված հարկը չի գրանցվում այն ժամանակավոր տարբերությունների դեպքում, երբ ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը կատարվում է այնպիսի գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը սկզբնապես գրանցվելիս, ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական, և ո՛չ էլ հարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկային մնացորդները չափվում են կիրառելով հարկային դրույքները, որոնք, ըստ էության, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և որոնք ակնկալվում է կիրառել այն ժամանակահատվածներում, երբ ժամանակավոր տարբերությունները հակադարձվեն կամ նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասն օգտագործվի: Նվազեցվող ժամանակավոր տարբերությունների և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասի մասով հետաձգված հարկային ակտիվը գրանցվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցումները:

Ընկերության անորոշ հարկային դիրքերը վերագնահատվում են ղեկավարության կողմից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Շահութահարկի գծով պարտավորությունները հաշվի են առնվում այն դեպքում, երբ ղեկավարությունը գտնում է, որ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջացման հավանականությունը ավելի մեծ է, քան դրանց բացակայությունը, եթե Ընկերության հարկային գործունեությունը վիճարկվի հարկային մարմինների կողմից:

3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

Գնահատումը հիմնված է այն հարկային օրենքների և համապատասխան իրավական ակտերի մեկնաբանությունների վրա, որոնք, ըստ էության, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ինչպես նաև նմանատիպ հարցերի շուրջ ցանկացած հայտնի դատական կամ այլ որոշումների վրա: Տուգանքների, տոկոսների և հարկերի, բացառությամբ շահութահարկի, գծով պարտավորությունները ճանաչվում են ղեկավարության կողմից՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պարտավորությունների մարման համար պահանջվող ծախսերի լավագույն գնահատականը:

Ավելացված արժեքի հարկ. Վաճառքին վերաբերող ավելացված արժեքի հարկը ենթակա է վճարման հաճախորդներին ապրանքների հանձնման կամ ծառայությունների մատուցման ժամանակ: Գնմանը վերաբերող ԱԱՀ-ը սովորաբար հաշվանցվում է վաճառքին վերաբերող ԱԱՀ-ի դիմաց, ԱԱՀ-ի հարկային հաշիվը ստանալուց և հաստատելուց հետո: Հարկային մարմինները թույլատրում են ԱԱՀ-ը հաշվարկել զուտ հիմունքով: Վաճառքին և գնումներին վերաբերող ԱԱՀ-ի գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են համախառն հիմունքով և առանձին բացահայտվում են որպես ակտիվ և պարտավորություն:

Դեբիտորական պարտքերի արժեզրկման համար պահուստ ստեղծելու դեպքում արժեզրկումից կորուստը ճանաչվում է պարտապանի համախառն գումարում, ներառյալ ԱԱՀ-ը:

Պաշարներ. Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների արժեքը որոշվում է միջին կշռված հիմունքներով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած վաճառքի ծախսերը:

Կանխավճարներ. Կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկման գծով պահուստը: Կանխավճարները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ, երբ կանխավճարին վերաբերող ապրանքներն ու ծառայությունները ակնկալվում է ստանալ մեկ տարի հետո կամ երբ կանխավճարը վերաբերում է այնպիսի ակտիվի, որը սկզբնական ճանաչման ժամանակ կդասակարգվի որպես ոչ ընթացիկ: Ակտիվներ ձեռք բերելու գծով կանխավճարները փոխանցվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ Ընկերությունը ստանում է ակտիվի նկատմամբ վերահսկողություն և հավանական է, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն: Այլ կանխավճարները ծախսագրվում են շահույթի կամ վնասի կազմում, երբ կանխավճարի հետ կապված ապրանքը կամ ծառայությունը ստացվում է: Եթե կա այնպիսի հայտանիշ, որ կանխավճարին վերաբերող ակտիվները, ապրանքները կամ ծառայությունները չեն ստացվի, ապա կանխավճարի հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար դուրս է գրվում և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Կանոնադրական կապիտալ. Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ հայեցողական շահաբաժիններով բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն վերագրելի են նոր բաժնետոմսերի թողարկմանը, սեփական կապիտալում ցույց են տրվում որպես ստացված մուտքերից նվազեցում՝ հարկումից հետո: Իրական արժեքի այն մասը, որը գերազանցում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը, սեփական կապիտալում գրանցվում է որպես էմիսիոն եկամուտ:

Շահաբաժիններ. Շահաբաժինները ներկայացվում են որպես պարտավորություն և նվազեցվում են սեփական կապիտալից այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվել և հաստատվել են: Շահաբաժինները, որոնք հայտարարված են հաշվետու ժամանակաշրջանից հետո և մինչև ֆինանսական հաշվետվությունների թողարկման համար հաստատումը, բացահայտվում են հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքերի վերաբերյալ ծանոթագրությունում: Ընկերության՝ ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն պատրաստված հաշվետվությունները հիմք են հանդիսանում շահույթի բաշխման և այլ հատկացումների համար:

Պարտավորությունների և վճարների գծով պահուստներ. Պարտավորությունների և վճարների գծով պահուստները անորոշ ժամկետներով կամ չափով ոչ ֆինանսական պարտավորություններ են:

Հասույթի ճանաչում. Ապրանքների վաճառքից հասույթը ճանաչվում է ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների փոխանցման պահին, սովորաբար, երբ ապրանքները առաքվում են: Եթե Ընկերությունը համաձայնում է ապրանքները տեղափոխել նշված վայր, հասույթը ճանաչվում է այն ժամանակ, երբ ապրանքները փոխանցվում են հաճախորդին նշանակման վայրում: Հասույթը ճանաչվում է գործարքի գնի չափով: Գործարքի գինն այն հատուցման գումարն է, որի իրավունքը ընկերությունը ակնկալում է հաճախորդին խոստացված ապրանքների կամ ծառայությունների նկատմամբ վերահսկողությունը փոխանցելու դիմաց՝ բացառությամբ երրորդ անձանց անունից հավաքագրված գումարները: Վաճառքները ներկայացվում են առանց ԱԱՀ-ի և զեղչերի:

3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

Վաճառքը ճանաչվում է այն ժամանակ, երբ ապրանքների նկատմամբ վերահսկողությունը փոխանցվել է, այսինքն՝ երբ ապրանքները փոխանցվել են հաճախորդին, վերջինս ունի ապրանքներն իր հայեցողությամբ տնօրինելու լիակատար հնարավորություն, և չկան չմարված պարտավորություններ, որոնք կազդեին հաճախորդի կողմից ապրանքների ընդունման վրա: Փոխանցումն իրականացվում է այն ժամանակ, երբ ապրանքները հաճախորդին հանձնվում են Ընկերության պահեստում, ինամաշության և կորստի ռիսկերը փոխանցվում են հաճախորդին, և հաճախորդը կամ ապրանքն ընդունել է պայմանագրին համապատասխան, սպառվել է ընդունումը վիճարկելու համար նախատեսված ժամանակահատվածը, կամ Ընկերությունն ունի օբյեկտիվ ապացույց, որ ընդունման բոլոր չափանիշները բավարարվել են:

Չեղչված հիմունքով վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է պայմանագրում նշված գնի հիման վրա՝ առանց գնահատված ծավալի զեղչերի: Ընկերությունը չի ակնկալում այնպիսի պայմանագրեր, երբ խոստացված ապրանքների կամ ծառայությունների հաճախորդին փոխանցելու և հաճախորդի կողմից վճարման միջև ընկած ժամանակահատվածը գերազանցում է մեկ տարին: Հետևաբար, Ընկերությունը որևէ գործարքի գին չի ճշգրտում փողի ժամանակային արժեքի տեսանկյունից: Չեղչերը տրամադրվում են վաճառքի ժամանակ՝ կոնկրետ ժամանակային կետի հիմունքով:

Ֆինանսավորման որևէ տարր ներկա չի համարվում, քանի որ վաճառքն իրականացվում է մինչև 45 օր տարաժամկետ վճարման պայմանով, ինչը համահունչ է շուկայում ընդունված գործելակերպին: Դեբիտորական պարտքը ճանաչվում է ապրանքների առաքման ժամանակ, հաշվի առնելով, որ դա այն պահն է, երբ հատուցումը դառնում է անվերապահ, քանի որ մինչև վճարման կատարման օրը պահանջվում է միայն ժամանակի անցում:

Հատուցումներ աշխատակիցներին. Աշխատավարձը, պետական կենսաթոշակային և Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության ֆոնդերին հատկացումները, տարեկան վճարովի արձակուրդը, հիվանդության պատճառով բացակայությունը և պարգևավճարները հաշվեգրվում են այն տարում, երբ տվյալ հատուցումները որոշող համապատասխան ծառայությունները մատուցվել են Ընկերության աշխատակիցների կողմից:

Ավանդային պարտավորություններ. Ավանդային պարտավորությունը ճանաչվում է, երբ վերադարձվող տարաները առաքվում են հաճախորդին: Այնուհետև «վերադարձման ենթակա տարաներ գործարանում/պահեստում» ակտիվը վերադասակարգվում է որպես «վերադարձման ենթակա տարաներ՝ առևտրի մեջ»: Փոխանցումը տեղի է ունենում հաշվեկշռային արժեքով՝ բազմապատկած քանակով: Վերադարձման ենթակա տարաների հաշվեկշռային արժեքը հավասար է ավանդի արժեքին: Այս վերադասակարգումը տեղի է ունենում ամսական կտրվածքով: Կատարվում է գնահատում կոտրված կամ կորած վերադարձվող տարաների քանակի և արժեքի վերաբերյալ, որոնց վերադարձը չի ակնկալվում: Այս գնահատումը ձևակերպվում է որպես կրճատում՝ ինչպես վերադարձման ենթակա կոնտեյներների, այնպես էլ ավանդային պարտավորության հաշվում, և հիմնված է վերադարձի տեմպերի պատմական օրինաչափությունների և ղեկավարության նախկին փորձի վրա:

Դրամական միջոցների հոսքերի հաշվետվությունում արտարժութային տարբերությունների ներկայացում. Ընկերությունը որոշում է կայացրել արտարժույթի տարբերությունները բացառել դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշիվների փոփոխությունների գումարներից և դրանց գումարները ներկայացնել որպես ճշգրտում ՝ անկանխիկ հոդվածներից ստացված շահույթում՝ նախքան հարկումը:

Թողարկումից հետո ֆինանսական հաշվետվությունների փոփոխություն. Թողարկումից հետո ֆինանսական հաշվետվությունների ցանկացած փոփոխություն պահանջում է Ընկերության ղեկավարության հաստատումը, ով լիազորել է այդ ֆինանսական հաշվետվությունների թողարկումը:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է հաշվապահական հաշվառման գնահատականներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Գնահատումները և դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում: Գնահատականներից բացի, ղեկավարությունը կատարում է նաև որոշակի այլ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում: Մասնագիտական դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, և գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում նշանակալի ճշգրտման համար, հետևյալն են.

Կապակցված կողմերի հետ գործարքների սկզբնական ճանաչում. Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը գործարքներ է իրականացնում իր կապակցված կողմերի հետ: ՖՀՄՍ 9-ը պահանջում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում՝ հիմնված նրանց իրական արժեքի վրա: Դատողությունը կիրառվում է որոշելու, թե արդյոք գործարքները գնահատված են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ չկա ակտիվ շուկա այդպիսի գործարքների համար: Դատողության համար հիմք է հանդիսանում նմանատիպ գործարքների գնահատումը չկապակցված կողմերի հետ և արդյունավետ տոկոսադրույքով վերլուծությունները: Կապակցված կողմերի հաշվեկշռի պայմաններն ու դրույթները բացահայտվում են Ծանոթագրություն 7-ում:

Ակնկալվող պարտքային կորուստներ. Ակնկալվող պարտքային կորուստների չափման նպատակով Ընկերությունն օգտագործում է հիմնավոր կանխատեսումային տեղեկատվություն, ներառյալ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումներ: Այնուամենայնիվ, ինչպես ցանկացած տնտեսական կանխատեսումներում, այս կանխատեսումների գծով ևս՝ ենթադրությունները և դրանց տեղի ունենալու հավանականությունը բնորոշվում է անորոշության բարձր աստիճանով, ուստի փաստացի արդյունքները կարող են էապես տարբերվել կանխատեսումներից: Ծանոթագրություն 27-ը ներառում է ավելի մանրամասն տեղեկատվություն այն մասին, թե ինչպես է Ընկերությունը կանխատեսումային տեղեկատվությունը ներառել ակնկալվող պարտքային կորուստների չափման մոդելներում:

Հարկային օրենսդրություն. ՀՀ հարկային և մաքսային օրենսդրությունը ենթակա են տարբեր մեկնաբանումների: Ղեկավարության համոզմամբ՝ հարկային օրենսդրության հիման վրա կատարված իր մեկնաբանություններն ու գնահատականները պատշաճ և հիմնավոր են, սակայն որևէ երաշխիք չի կարող տրվել առ այն, որ դրանք չեն վիճարկվի հարկային մարմինների կողմից: Տե՛ս Ծանոթագրություն 26:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը. Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը կատարվում է՝ ելնելով մասնագիտական դատողությունից, հիմք ընդունելով համանման ակտիվների գծով առկա փորձը: Այս ակտիվներում մարմնավորվող ապագա տնտեսական օգուտները հիմնականում կստացվեն դրանց օգտագործումից: Սակայն մի շարք այլ գործոններ, ինչպիսիք են՝ տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, հաճախ հանգեցնում են տվյալ ակտիվների հետ կապված տնտեսական շահույթի նվազմանը: Ղեկավարությունը գնահատում է հիմնական միջոցների օգտակար ծառայության մնացորդային ժամկետը՝ հիմք ընդունելով ակտիվների տեխնիկական վիճակը, և հաշվի առնելով հաշվարկային ժամանակահատվածը, որի ընթացքում տվյալ ակտիվները Ընկերության համար կառաջացնեն տնտեսական շահույթ: Հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոնները. ա) ակտիվների ակնկալվող օգտագործման ժամկետը, բ) սարքավորումների ակնկալվող մաշվածությունը, որը կախված է շահագործման բնութագրերից և տեխնիկական սպասարկման ծրագրից, և գ) տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, որն առաջանում է շուկայի պայմանների փոփոխության հետևանքով:

Եթե գնահատված օգտակար ծառայության ժամկետները 10%-ով տարբերվեին ղեկավարության գնահատականներից, ապա 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար մաշվածության վրա ազդեցությունը կկազմեր 97,309 հազ. ՀՀ դրամի չափով աճ կամ 97,309 հազ. դրամի նվազում՝ (2023թ՝. 86,033 հազ. ՀՀ դրամի չափով աճ կամ 86,033 հազ. ՀՀ դրամի չափով նվազում):

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին

Ստորև թվարկված վերանայված ստանդարտների կիրառումը Ընկերության համար պարտադիր է՝ սկսած 2024թ. հունվարի 1-ից, սակայն դրանք էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության վրա.

Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում Վարձակալություն. Վարձակալության պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության ժամանակ (թողարկվել է 2022թ. սեպտեմբերի 22-ին և ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունները վերաբերում են վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքներին, որոնք բավարարում են ՖՀՄՍ 15-ի պահանջները՝ վաճառք հաշվառվելու համար: Փոփոխությունները պահանջում են, որ վաճառող-վարձակալը հետագայում չափի գործարքից բխող պարտավորությունները այն կերպ, որ չճանաչի իր կողմից պահպանված օգտագործման իրավունքի հետ կապված որևէ շահույթ կամ վնաս: Սա նշանակում է նման շահույթի հետաձգում, նույնիսկ եթե պարտավորության էությունը կայանում է փոփոխական վճարումներում, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքաչափից:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը – ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (ի սկզբանե թողարկվել է 2020թ. հունվարի 23-ին և հետագայում թողարկման ամսաթիվը փոփոխվել է 2020թ. հուլիսի 15-ին և 2022թ. հոկտեմբերի 31-ին, ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Այս փոփոխություններով հստակեցվում է, որ պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասակարգումը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող իրավունքներով: Պարտավորությունները երկարաժամկետ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ էության ունի դրանց մարումն առնվազն 12 ամսով հետաձգելու իրավունք: Ուղեցույցն այլևս չի սահմանում այդ իրավունքի անվերապահ լինելու պահանջ: 2022թ. հոկտեմբերի փոփոխությունը սահմանեց, որ վարկային պայմանագրերը, որոնք պետք է կատարվեն հաշվետու ամսաթվից հետո, չեն ազդում հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքի՝ որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման վրա : Մարումը ապագայում հետաձգելու իրավունքի իրացման առումով ղեկավարության ակնկալիքները ազդեցություն չունեն պարտավորությունների դասակարգման վրա: Պարտավորությունը դասակարգվում է որպես կարճաժամկետ, եթե պայմանը խախտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ, նույնիսկ եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջում պարտատիրոջից ստացվել է պայմանի կատարման պարտավորությունից ազատում: Միևնույն ժամանակ, վարկը դասակարգվում է որպես երկարաժամկետ, եթե վարկային պայմանագրի պայմանը խախտվում է միայն հաշվետու ամսաթվից հետո: Բացի այդ, փոփոխությունները հստակեցնում են պարտքի դասակարգման պահանջները, որոնք կազմակերպությունը կարող է մարել՝ այն սեփական կապիտալի վերածելու միջոցով: «Մարում» հասկացությունը սահմանվում է որպես պարտավորության դադարեցում՝ դրամական միջոցների, տնտեսական օգուտները մարմնավորող այլ ռեսուրսների կամ կազմակերպության սեփական բաժնային գործիքների միջոցով կատարված վերջնահաշվարկի արդյունքում: Բացառություն է սահմանվում փոխարկելի գործիքների համար, որոնք կարող են վերածվել սեփական կապիտալի, բայց միայն այն գործիքների համար, երբ փոխարկման օպցիոնը դասակարգվում է որպես բարդ ֆինանսական գործիքի առանձին բաղադրիչ հանդիսացող բաժնային գործիք:

Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն» և ՖՀՄՍ 7-ում «Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ. Մատակարարների ֆինանսական պայմանագրեր» (Թողարկվել է 2023թ. մայիսի 25-ին, ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Ի պատասխան ֆինանսավորման պայմանագրերի ոչ համարժեք կամ ապակողմնորոշիչ բացահայտման վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների մտահոգություններին, 2023թ. մայիսին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 7-ում և ՖՀՄՍ 7-ում՝ պահանջելով բացահայտել կազմակերպության մատակարարների ֆինանսական պայմանագրերը (ՄՖՊ): Այս փոփոխություններով պահանջվում է, որպեսզի կազմակերպությունը բացահայտի մատակարարների այն ֆինանսական պայմանագրերը, որոնք ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին հնարավորություն կտան գնահատել այդ պայմանագրերի ազդեցությունը կազմակերպության պարտավորությունների և դրամական միջոցների հոսքերի վրա և կազմակերպության իրացվելիության ռիսկի վրա: Լրացուցիչ բացահայտման պահանջների նպատակն է բարձրացնել մատակարարների ֆինանսական պայմանագրերի թափանցիկությունը: Փոփոխությունները չեն ազդում ճանաչման կամ չափման սկզբունքների վրա, այլ միայն բացահայտման պահանջների վրա: Փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Հրապարակվել են 2025թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո տարեկան ժամանակահատվածների համար պարտադիր մի շարք նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, և որոնք Ընկերությունը վաղաժամկետ չի կիրառել:

Փոփոխություններ ՀՀՄՍ 21-ում «Փոխանակելիության բացակայություն» (թողարկվել է 2023թ. օգոստոսի 15-ին և ուժի մեջ է մտնում 2025թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): 2023թ. օգոստոսին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 21-ում, որը նպատակ ունի օգնել կազմակերպություններին գնահատելու երկու արժույթների միջև փոխանակելիությունը և որոշել սփոթ փոխարժեքն այն դեպքում, երբ փոխանակելիություն առկա չէ: Փոփոխությունները ազդում են կազմակերպության վրա այն ժամանակ, երբ ընկերությունն ունի գործարք կամ գործառնություն արտարժույթով, որը չափման ամսաթվին որոշակի նպատակով չի կարող փոխանակվել այլ արժույթի: ՀՀՄՍ 21-ի փոփոխությունները չեն ներկայացնում սփոթ փոխարժեքը գնահատելու վերաբերյալ մանրամասն պահանջներ: Փոխարենը, սահմանվում է շրջանակ, որի համաձայն կազմակերպությունը կարող է որոշել սփոթ փոխարժեքը գնահատման ամսաթվի դրությամբ: Նոր պահանջները կիրառելիս չի թույլատրվում համեմատական տեղեկատվության վերաներկայացում: Անհրաժեշտ է ազդեցության ենթարկվող գումարները փոխարկել սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ գնահատված սփոթ փոխարժեքներով՝ չբաշխված շահույթի կամ կուտակային փոխարժեքային տարբերությունների պահուստի ճշգրտմամբ: Ընկերությունը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ . ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ (թողարկվել է 2024թ. մայիսի 30-ին և ուժի մեջ է մտնում 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

2024թ. մայիսի 30-ին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է փոփոխություններ ՖՀՄՍ 9-ում և ՖՀՄՍ 7-ում ՝ հետևյալ նպատակներով.
(ա) պարզաբանել որոշ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ճանաչման և ապաճանաչման ամսաթիվը, սահմանելով նոր բացառություն էլեկտրոնային դրամական փոխանցումների համակարգի միջոցով մարվող որոշ ֆինանսական պարտավորությունների համար.
(բ) պարզաբանել և լրացուցիչ ուղեցույց ներկայացնել՝ բացառապես մայր գումարի և տոկոսների վճարման չափանիշին ֆինանսական ակտիվի համապատասխանությունը գնահատելու համար.
(գ) ավելացնել նոր բացահայտումներ պայմանագրային ժամկետներ ունեցող որոշակի գործիքների գծով, որոնք կարող են առաջացնել դրամական միջոցների հոսքերի փոփոխություն (օրինակ՝ բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) նպատակների իրագործմանը կապակցված որոշ գործիքներ). և
(դ) թարմացնել իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI) չափվող բաժնային գործիքների բացահայտումները:

Ընկերությունը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ հաշվառման ստանդարտների տարեկան բարելավումներ (թողարկվել է 2024թ, հուլիսին և ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ից): ՖՀՄՍ 1-ով պարզաբանվել է, որ ՖՀՄՍ հաշվառման ստանդարտներին անցնելուց հետո հեջը պետք է դադարեցվի, եթե այն չի համապատասխանում «որակավորման չափանիշներին», այլ ոչ թե հեջի հաշվառման «պայմաններին»: Սա նպատակ ունի լուծել ՖՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ 9-ի հեջի հաշվառման պահանջների միջև անհամապատասխանության հետևանքով առաջացող հնարավոր տարընթերցումը: ՖՀՄՍ 7-ով պահանջվում են օգուտի կամ վնասի բացահայտումներ՝ կապված այն ֆինանսական ակտիվների ապաճանաչման հետ, որտեղ կազմակերպությունը ունի ընթացիկ մասնակցություն, այդ թվում, պահանջվում է բացահայտել՝ արդյոք իրական արժեքի չափումները ներառում են «նշանակալի ծավալով ոչ դիտարկելի մուտքային տվյալներ»: Այս նոր ձևակերպումը փոխարինում է «նշանակալի մուտքային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա» արտահայտությանը: Փոփոխության նպատակն է՝ ձևակերպումը համապատասխանեցնել ՖՀՄՍ 13-ին: Բացի այդ, պարզաբանվել են ՖՀՄՍ 7-ի կիրառման ուղեցույցի որոշ օրինակներ և ավելացվել է տեքստ այն, որ օրինակները հնարավոր է՝ չարտացոլեն ՖՀՄՍ 7-ի նշված պարբերությունների բոլոր պահանջները: ՖՀՄՍ 16-ում կատարվել է փոփոխություն՝ պարզաբանելով, որ երբ վարձակալը որոշում է, որ վարձակալության գծով պարտավորությունը մարվել է համաձայն ՖՀՄՍ 9-ի, ապա վարձակալը պետք է կիրառի ՖՀՄՍ 9-ի ուղեցույցը՝ արդյունքում առաջացող շահույթը կամ վնասը ճանաչելու համար:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Այս պարզաբանումը վերաբերում է վարձակալության գծով պարտավորություններին, որոնք մարվել են կազմակերպության կողմից այդ փոփոխությունը առաջին անգամ կիրառելու հաշվետու տարեկան ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո: ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 15-ի միջև անհամապատասխանությունը վերացնելու նպատակով այժմ պահանջվում է, որ առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվեն «ՖՀՄՍ 15-ի կիրառման միջոցով որոշված գումարով» այլ ոչ թե «գործարքի գնով» (ինչպես սահմանված է ՖՀՄՍ 15-ում)»: ՖՀՄՍ 10-ի փոփոխությամբ օգտագործելով պակաս միանշանակ ձևակերպում «դե-ֆակտո գործակալ» հանդիսացող կազմակերպության համար, և պարզաբանվել է, որ ՖՀՄՍ 10-ի Բ74 պարագրաֆում նկարագրված հարաբերությունը միայն մեկ օրինակ է այն հանգամանքներից, որոնց դեպքում պահանջվում է դատողություն՝ որոշելու, թե արդյոք կողմը հանդես է գալիս որպես դե ֆակտո գործակալ: ՀՀՄՍ 7-ում կատարվել է ճշտում՝ հեռացվել են «ինքնարժեքի մեթոդի» վկայակոչումները, որը հանվել է ՖՀՄՍ հաշվառման ստանդարտներից 2008թ. մայիսին, երբ ՀՀՄՍԽ-ն հրապարակեց «Ներդրման արժեքը դուստր ձեռնարկությունում, համատեղ վերահսկվող կազմակերպությունում կամ ասոցիացված կազմակերպությունում»:

ՖՀՄՍ 18. «Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում» (թողարկվել է 2024թ ապրիլի 9-ին և ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): 2024թ. ապրիլին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է նոր ստանդարտ՝ ՖՀՄՍ 18 «Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում», որը առանձնահատուկ անդրադառնում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվություններին առնչվող թարմացումներին: ՖՀՄՍ 18-ում ներկայացված առանցքային նոր հասկացությունները առնչվում են հետևյալին՝

- շահույթի կամ վնասի հաշվետվության կառուցվածքը.
- ֆինանսական հաշվետվություններում պահանջվող բացահայտումները շահույթի կամ վնասի չափման որոշակի դիրքերի գծով, որոնք ներկայացվում են կազմակերպության ֆինանսական հաշվետվություններից դուրս (այսինքն՝ ղեկավարության կողմից սահմանված չափման դիրքերը). և
- համախմբման և տարանջատման ընդլայնված սկզբունքները, որոնք կիրառելի են հիմնական ֆինանսական հաշվետվությունների, և ընդհանուր առմամբ ծանոթագրությունների նկատմամբ:

ՖՀՄՍ 18-ը կփոխարինի ՀՀՄՍ 1-ին. ՀՀՄՍ 1-ում ներառված սկզբունքներից շատերը պահպանվում են՝ սահմանափակ փոփոխություններով: ՖՀՄՍ 18-ը չի ազդի ֆինանսական հաշվետվությունների հոդվածների ճանաչման կամ չափման վրա, սակայն կարող են փոփոխվել կազմակերպության կողմից որպես «գործառնական շահույթ կամ վնաս» ներկայացվող դիրքերը: ՖՀՄՍ 18-ը կկիրառվի 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Այն կիրառելի է նաև համեմատական տեղեկատվության նկատմամբ:
Ընկերությունը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

7 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ

Կողմերը սովորաբար համարվում են փոխկապակցված, եթե դրանք գտնվում են ընդհանուր վերահսկողության տակ կամ եթե կողմերից մեկն ունի կարողություն վերահսկելու մյուս կողմին կամ կարող է ունենալ նշանակալի ազդեցություն կամ համատեղ վերահսկողություն մեկ այլ կողմի նկատմամբ՝ ֆինանսատնտեսական որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր հնարավոր փոխկապակցված կողմի հարաբերություն դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերության բնույթի, այլ ոչ միայն իրավական ձևի վրա:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխկապակցված կողմերի հետ մնացորդները հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	Համատեղ վերահսկվող ընկերություններ	Այլ փոխկապակցված կողմեր
Այլ դեբիտորական պարտքերի համախառն գումարը	25,196	1,096,566
Տրամադրված վարկեր	1,220,786	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	752,854	2,775,903

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխկապակցված կողմերի հետ մնացորդները հետևյալն են.

7 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	Համատեղ վերահսկվող ընկերություններ	Այլ փոխկապակցված կողմեր
Այլ դեբիտորական պարտքերի համախառն գումարը	31,111	674,501
Տրամադրված վարկեր	6,744,143	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	519,454	2,708,964

Փոխկապակցված կողմերի գծով եկամուտների և ծախսերի հոդվածները, 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	Մայր ընկերություն	Համատեղ վերահսկվող ընկերությունները	Այլ փոխկապակցված կողմեր
Հումքի և սպառման նյութերի գնումներ	-	-	(6,694,133)
Վճարված շահաբաժին	(15,900,000)	-	-
Ապրանքների գնումներ վերավաճառքի համար	-	(2,500,108)	(22,529)
Միջֆիրմային խորհրդատվական վճարներ	-	(593,024)	-
SS ծախսեր	-	(405,836)	-
Տոկոսային եկամուտ	-	271,294	-
Փոխհատուցումներ	-	116,630	
Այլ ծախսեր	-	(45,808)	-
Ոչ նյութական ակտիվների կապիտալացված արժեքը	-	(279,122)	-

Փոխկապակցված կողմերի գծով եկամուտների և ծախսերի հոդվածները 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	Մայր ընկերություն	Համատեղ վերահսկվող ընկերությունները	Այլ փոխկապակցված կողմեր
Պարտքի ներում	-	-	746,523
Հումքի և սպառման նյութերի գնումներ	-	-	(4,750,856)
Վճարված շահաբաժին	(5,000,000)	-	-
Ապրանքների գնումներ վերավաճառքի համար	-	(2,749,298)	-
Միջֆիրմային խորհրդատվական վճարներ	-	(560,748)	-
SS ծախսեր	-	(327,138)	-
Տոկոսային եկամուտ	-	297,578	-
Փոխհատուցումներ	-	99,779	
Այլ ծախսեր	-	(34,895)	-
Ոչ նյութական ակտիվների կապիտալացված արժեքը	-	(267,731)	-

Փոխկապակցված կողմերի հետ գործարքները Ընկերությունն իրականացրել է «պարզած ձեռքի» սկզբունքով:

Հիմնական ղեկավար անձնակազմի հատուցում. Ընկերության հիմնական ղեկավար անձնակազմը բաղկացած է գործադիր ղեկավարությունից և ստորաբաժանումների ղեկավարներից: Առանցքային ղեկավար անձնակազմի փոխհատուցումը 2024թ. դեկտեմբերի 31-ին և 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար ներկայացված է ստորև.

	2024թ.		2023թ.	
Հազ. ՀՀ դրամ	Ծախս	Հաշվեգրված պարտավորություն	Ծախս	Հաշվեգրված պարտավորություն
Կարճաժամկետ հատուցումներ.				
- Աշխատավարձեր և կարճաժամկետ պարգևավճարներ	358,656	80,848	314,621	68,238
Ընդամենը	**358,656**	**80,848**	**314,621**	**68,238**

8 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ներկայացված են ստորև.

Հազ. ՀՀ դրամ	Հող	Շենքեր, մեքենա-սարքավո-րումներ	Տրանսպոր-տային միջոցներ	Մարկետին-գային սարքավո-րումներ	Այլ	Անավարտ շինարարու-թյուն	Օգտագործ-ման իրավունքի ձևով ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեքը առ 1 հունվարի 2023թ.	61,993	9,915,635	1,713,605	7,700,824	716,742	1,382	384,911	**20,495,092**
Կուտակված մաշվածություն	-	(7,221,139)	(1,400,602)	(5,604,183)	(634,545)	-	(309,638)	**(15,170,107)**
Հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2023թ.	**61,993**	**2,694,496**	**313,003**	**2,096,641**	**82,197**	**1,382**	**75,273**	**5,324,985**
Ավելացումներ	-	515,633	23,345	475,717	73,138	-	625,574	**1,713,407**
Օտարումներ/դուրսգրումներ	-	(98,541)	(167,761)	(527,398)	(1,995)	(1,382)	-	**(797,077)**
Օտարումներ/դուրսգրումներ մաշվածության գծով	-	82,561	167,761	391,239	1,995	-	-	**643,556**
Մաշվածության գծով ծախս	-	(341,325)	(82,686)	(395,715)	(40,602)	-	(96,144)	**(956,472)**
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**61,993**	**2,852,824**	**253,662**	**2,040,484**	**114,733**	**-**	**604,703**	**5,928,399**
Սկզբնական արժեքը առ 31 դեկտեմբերի 2023թ.	61,993	10,332,727	1,569,189	7,649,143	787,885	-	1,010,485	**21,411,422**
Կուտակված մաշվածություն	-	(7,479,903)	(1,315,527)	(5,608,659)	(673,152)	-	(405,782)	**(15,483,023)**
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**61,993**	**2,852,824**	**253,662**	**2,040,484**	**114,733**	**-**	**604,703**	**5,928,399**
Ավելացումներ	-	640,385	140,390	554,450	89,576	599	-	**1,425,400**
Օտարումներ/դուրսգրումներ	-	(132,127)	(54,025)	(463,149)	(121,466)	-	(384,911)	**(1,155,678)**
Օտարումներ/դուրսգրումներ մաշվածության գծով	-	90,677	54,025	538,362	120,657	-	384,911	**1,188,632**
Մաշվածության գծով ծախս	-	(385,091)	(96,575)	(437,645)	(53,781)	-	(127,306)	**(1,100,398)**
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**61,993**	**3,066,668**	**297,477**	**2,232,502**	**149,719**	**599**	**477,397**	**6,286,355**
Սկզբնական արժեքը առ 31 դեկտեմբերի 2024թ.	61,993	10,840,985	1,655,554	7,740,444	755,995	599	625,574	**21,681,144**
Կուտակված մաշվածություն	-	(7,774,317)	(1,358,077)	(5,507,942)	(606,276)	-	(148,177)	**(15,394,789)**
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**61,993**	**3,066,668**	**297,477**	**2,232,502**	**149,719**	**599**	**477,397**	**6,286,355**

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված և շահագործման մեջ գտնվող ակտիվների արժեքը՝ համապատասխանաբար 9,937,619 հազ. ՀՀ դրամ և 10,391,015 հազ. ՀՀ դրամ՝ ներառված է հիմնական միջոցներում:

9 Ոչ նյութական ակտիվներ

Հազ. ՀՀ դրամ	Ներքին մշակված ծրագրակազմ	Ձեռք բերված ծրագրակազմի լիցենզիաներ	Ընդամենը
Սկզբնական արժեքը առ 1 հունվարի 2023թ.	1,335,680	8,050	1,343,730
Կուտակված ամորտիզացիա	(762,698)	(8,050)	(770,748)
Հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2023թ.	**572,982**	**-**	**572,982**
Ավելացումներ	269,086	-	269,086
Ամորտիզացիոն ծախս	(88,880)	-	(88,880)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2023թ.	**753,188**	**-**	**753,188**
Սկզբնական արժեքը առ 1 հունվարի 2023թ.	1,604,766	8,050	1,612,816
Կուտակված ամորտիզացիա	(851,578)	(8,050)	(859,628)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2023թ.	**753,188**	**-**	**753,188**
Ավելացումներ	279,970	-	279,970
Ամորտիզացիոն ծախս	(122,981)	-	(122,981)
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**910,177**	**-**	**910,177**
Սկզբնական արժեքը առ 1 հունվարի 2024թ.	1,884,736	8,050	1,892,786
Կուտակված ամորտիզացիա	(974,559)	(8,050)	(982,609)
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**910,177**	**-**	**910,177**

10 Տրամադրված վարկեր

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Տրամադրված ոչ ընթացիկ վարկեր		
Չապահովված վարկեր համատեղ վերահսկվող կազմակերպությանը	-	6,242,861
Ընդամենը տրամադրված ոչ ընթացիկ վարկեր	**-**	**6,242,861**
Տրամադրված ընթացիկ վարկեր		
Չապահովված վարկեր համատեղ վերահսկվող կազմակերպությանը	1,220,786	501,282
Ընդամենը տրամադրված ընթացիկ վարկեր	**1,220,786**	**501,282**

Տրամադրված վարկերն Ընկերության ավելցուկային կանխիկ գումարն է, որը տրամադրվում է Coca-Cola HBC Finance B.V.-ին, որը հանդես է գալիս որպես Coca-Cola HBC AG-ի պատկանող ընկերությունների ֆինանսավորող կազմակերպություն: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տրամադրված վարկերը՝ 417,755 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 902,783 հազ. դրամ) արտահայտված են եվրոյով, 803,031 հազ. դրամ (2023թ.՝ 5,841,360 հազ.)՝ ԱՄՆ դոլարով: 2024թ. ընթացքում հետ են ստացվել 838,720 հազ. ՀՀ դրամ, 1,000 հազ. եվրո և 12,267 հազ. ԱՄՆ դոլարի չափով վարկեր: 2024թ. ընթացքում 1,000 հազ. եվրոյի և 2,000 հազ. ԱՄՆ դոլարի չափով վարկերը վերադասակարգվել են երկարաժամկետից կարճաժամկետ:

10 Տրամադրված վարկեր (շարունակություն)

Ընկերությունը կիրառում է ՖՀՄՍ 9՝ ակնկալվող պարտքային կորուստները չափելու համար, որը տրամադրված վարկերի համար օգտագործում է 12-ամսյա սպասվող վարկային վնաս: Ընկերության ղեկավարության կողմից կատարված վերլուծության հիման վրա ակնկալվող պարտքային կորուստը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ էական չէ:

11 Պաշարներ

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Հումք	1,611,486	1,044,097
Գնված ապրանքներ	585,996	611,612
Արտադրված ապրանքներ	565,914	430,004
Պահեստամասեր	219,553	198,690
Վերադարձելի տարաներ առևտրում	94,517	157,586
Վերադարձելի տարաներ պահեստում	69,509	125,073
Այլ ծախսվող նյութեր	137,382	123,548
Ընդամենը պաշարներ	**3,284,357**	**2,690,610**

12 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Առևտրային դեբիտորական պարտքեր	464,327	356,304
Նվազեցված՝ արժեզրկման կորստի գծով պահուստի չափով	(109,981)	(92,335)
Այլ ֆինանսական ակտիվներ	1,093,427	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի կազմում	**1,447,773**	**263,969**
Տրված կանխավճարներ ընթացիկ ակտիվների համար	286,570	194,485
Այլ դեբիտորական պարտքեր	26,242	29,367
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**1,760,585**	**487,821**

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման համար Ընկերությունն օգտագործում է ՖՀՄՍ 9-ով նախատեսված պարզեցված մոտեցումը, համաձայն որի օգտագործվում է բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների համար գնահատված պահուստը ամբողջ ժամկետի համար:
Ակնկալվող կորստի դրույքաչափերի համար հիմք են ծառայում յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին նախորդող 24-ամսյա ժամանակահատվածում հաճախորդների վճարման օրինաչափությունները և այդ ժամանակահատվածում համապատասխան վարկային կորուստների պատմական տվյալները: Կորուստների պատմական տվյալները ճշգրտվում են՝ արտացոլելու համար ընթացիկ և կանխատեսումային տեղեկատվությունը մակրոտնտեսական գործոնների վերաբերյալ, որոնք ազդում են հաճախորդների դեբիտորական պարտքերի մարման կարողության վրա: Ընկերությունը առավել կարևոր գործոններ է համարել ՀՆԱ-ն և այն երկրների գործազրկության մակարդակը, որտեղ նա վաճառում է իր ապրանքներն ու ծառայությունները, և, համապատասխանաբար, ճշգրտում է պատմական կորուստների տեմպերը `հիմնվելով այդ գործոնների սպասվող փոփոխությունների վրա:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի համար պարտքային կորստի պահուստը որոշվում է ստորև բերված աղյուսակում ներկայացված պահուստի ժամկետայնության հաշվարկի միջոցով: Պահուստի ժամկետայնության հաշվարկը հիմնված է ակտիվի ժամկետանց օրերի քանակի վրա՝ ճշգրտված դեֆոլտի դեպքում կորստի չափով:

12 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (շարունակություն)

Համախառն գումարի նկատմամբ %-ային արտահայտությամբ	31 դեկտեմբերի 2024թ. Կորստի դրույք	Համա-խառն հաշվե-կշռային արժեք	ԱՊԿ ողջ ժամկե-տի ընթաց-քում	Զուտ հաշվեկշռային արժեք	31 դեկտեմբերի 2023թ. Կորստի դրույք	Համա-խառն հաշվե-կշռային արժեք	ԱՊԿ ողջ ժամկե-տի ընթաց-քում	Զուտ հաշվե-կշռային արժեք
Առևտրային դեբիտորական պարտքեր								
- ընթացիկ	2.77%	230,208	6,372	223,836	1.43%	234,742	3,365	231,377
- Մինչև 14 օր ժամկետանց	8.97%	51,590	4,629	46,961	10.26%	6,203	637	5,566
- 15-30 օր ժամկետանց	25.91%	50,647	13,123	37,524	38.73%	3,368	1,304	2,064
- 31-60 օր ժամկետանց	34.90%	12,745	4,448	8,297	48.58%	2,953	1,435	1,518
- 61-90 օր ժամկետանց	53.47%	18,175	9,719	8,456	56.45%	1,825	1,030	795
- 91-120 օր ժամկետանց	63.32%	5,930	3,755	2,175	62.55%	3,200	2,002	1,198
- ավելի քան 120 օր ժամկետանց	63.32%	73,875	46,778	27,097	62.55%	57,279	35,828	21,451
Անհատապես գնահատված. իրավական վարույթներ	100.00%	21,157	21,157	-	100.00%	46,734	46,734	-
Ընդամենը		**464,327**	**109,981**	**354,346**		**356,304**	**92,335**	**263,969**

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերի համար ձևավորված պարտքային կորստի պահուստի շարժը ըստ ակնկալվող պարտքային կորստի պարզեցված մոդելի, տարեկան ժամանակահատվածի սկզբից մինչև վերջ ընկած ժամանակահատվածի համար.

Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստի շարժումը 2024թ. ընթացքում հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Արժեզրկման կորստի պահուստ առ 1 հունվարի	92,335	64,218
Արժեզրկման կորստի պահուստ տարվա ընթացքում	16,274	30,911
Դեբիտորական պարտքի դուրսգրում տարվա ընթացքում	1,372	(2,794)
Արժեզրկման կորստի պահուստ առ 31 դեկտեմբերի	**109,981**	**92,335**

Ընկերությունը գնահատել է այլ դեբիտորական պարտքերի ռիսկը և կարծում է, որ ռիսկի և պահուստի չափը էական չէ:

Ընթացիկ ակտիվների կանխավճարների շարժերը հետևյալն են.

12 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	Տրված կանխավճարներ ընթացիկ ակտիվների համար
Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի 2023թ.	**230,935**
Ավելացումներ	11,171,892
Կանխավճարների ապաճանաչում՝ պայմանավորված ապրանքների կամ ծառայությունների ստացման հանգամանքով	(11,208,342)
Ընդամենը կանխավճարներ ընթացիկ ակտիվների համար առ 31 դեկտեմբերի 2023թ.	**194,485**
Ավելացումներ	10,565,233
Կանխավճարների ապաճանաչում՝ պայմանավորված ապրանքների կամ ծառայությունների ստացման հանգամանքով	(10,473,148)
Ընդամենը կանխավճարներ ընթացիկ ակտիվների համար առ 31 դեկտեմբերի 2024թ.	**286,570**

13 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ցպահանջ բանկային մնացորդներ	5,717,125	8,614,564
Դրամական միջոցներ դրամարկղում	92	265
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**5,717,217**	**8,614,829**

Բանկային մնացորդները տեղաբաշխված են Հայաստանի լավագույն տասնյակում ներառված բանկերում և դասակարգված են որպես ընթացիկ և ոչ արժեզրկված (31 դեկտեմբերի 2023թ.՝ Հայաստանի լավագույն տասնյակում ներառված բանկերում և դասակարգված են որպես ընթացիկ և ոչ արժեզրկված):
Ստորև աղյուսակը բացահայտում է ցպահանջ բանկային մնացորդների վարկային որակը՝ հիմնված վարկային ռիսկի վարկանշման վրա առ 31 դեկտեմբերի 2024թ. և 31 դեկտեմբերի 2023թ.

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
A1 (Moody's)	-	17,321
B1 (Moody's)	5,715,258	8,585,216
Չվարկանշված	1,867	12,027
Ընդամենը ցպահանջ բանկային մնացորդներ	**5,717,125**	**8,614,564**

14 Կանոնադրական կապիտալ

2024թ. դեկտեմբերի 31-ին Ընկերության բաժնեմասի ընդհանուր թիվը կազմել է 25 բաժնեմաս (2023թ. դեկտեմբերի 31-ին՝ 25 բաժնեմաս)՝ մեկ բաժնեմասի համար 53,874 հազ. ՀՀ դրամ անվանական արժեքով (2023թ. ՝ մեկ բաժնեմասի համար՝ 53,874 հազ. ՀՀ դրամ): Բոլոր թողարկված սովորական բաժնետոմսերը ամբողջությամբ վճարված են: Յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է մեկ ձայնի իրավունք: Տարվա ընթացքում հայտարարագրված և վճարված շահաբաժինները կազմել են 15,900,000 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 5,000,000 հազ. ՀՀ դրամ): Մեկ բաժնետոմսի դիմաց շահաբաժինը 2024թ. համար կազմում է 636,000 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 200,000 հազ. ՀՀ դրամ մեկ բաժնետոմսի դիմաց): Ընկերության 2022թ. ֆինանսական հաշվետվություններում կանոնադրական կապիտալի ընդհանուր գումարը տարբերվում էր Ընկերության կանոնադրությունից 336,975 հազ. ՀՀ դրամով, քանի որ Ընկերությունը դեռևս սպասում էր Մայր կազմակերպության հաստատմանը հաշվապահական հաշվառման մեջ կանոնադրական կապիտալի մնացորդի փոփոխության իրականացման համար: Տարբերությունը ճշգրտվել է 2023թ.-ին:

15 Վարձակալության գծով պարտավորություններ

Ընկերությունը վարձակալում է մեքենաներ: Վարձակալության պայմանագրերը սովորաբար կնքվում են ֆիքսված ժամկետով՝ 5 տարի տևողությամբ: Վարձակալության պայմանագրերից բխող պարտավորությունները սկզբնական ճանաչման պահին չափվում են ներկա արժեքով: Ընկերությունը վարձակալության պարտավորությունները ճանաչել է հետևյալ կերպ.

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Վարձակալության գծով կարճաժամկետ պարտավորություններ	115,922	104,359
Վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորություններ	389,382	505,304
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ	**505,304**	**609,663**

2024թ. ֆինանսական ծախսերում ներառված տոկոսային ծախսերը կազմել են 57,965 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 13,703 հազ. ՀՀ դրամ):

16 Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների համեմատություն

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների և ֆինանսական գործունեությունից բխող՝ Ընկերության պարտավորությունների շարժի վերլուծությունը ներկայացված ժամանակաշրջաններից յուրաքանչյուրի համար: Սրանք այն պարտավորություններն են, որոնք դրամական միջոցների հոսքերի հաշվետվությունում ներկայացվում են որպես ֆինանսական պարտավորություններ.

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.		31 դեկտեմբերի 2023թ.	
	Վարձակալության գծով պարտավո-րություններ	Ընդամենը	Վարձակալության գծով պարտավո-րություններ	Ընդամենը
Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորություններ առ 1 հունվարի	**609,663**	**609,663**	**85,576**	**85,576**
Դրամական միջոցների հոսքեր				
Մայր գումարի մարումներ	(104,359)	**(104,359)**	(101,487)	**(101,487)**
Տոկոսավճարներ	(57,965)	**(57,965)**	(13,703)	**(13,703)**
Ոչ դրամական փոփոխություններ				
Տոկոսների հաշվեգրում	57,965	**57,965**	13,703	**13,703**
Նոր վարձակալություններ	-	**-**	625,574	**625,574**
Ընդամենը	**505,304**	**505,304**	**609,663**	**609,663**

17 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	3,889,435	3,487,037
Հաշվեգրված պարտավորություններ	3,003,802	2,198,688
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի կազմում	**6,893,237**	**5,685,725**
Աշխատակիցներին առնչվող պահուստներ	158,353	146,626
Արձակուրդային պահուստ	113,259	94,106
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**7,164,849**	**5,926,457**

18 Ավանդային պարտավորություններ

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Առևտրում վերադարձման ենթակա շշերի գծով պարտավորություններ	44,333	86,354
Առևտրում վերադարձման ենթակա արկղերի գծով պարտավորություններ	50,184	71,232
Ընդամենը ավանդային պարտավորություններ	**94,517**	**157,586**

19 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Արտաքին հաճախորդներից ստացված հասույթը նմանատիպ ապրանքների կամ ծառայությունների յուրաքանչյուր խմբի համար հետևյալն է (2024թ. և 2023թ. բոլոր եկամուտները ճանաչվել են որոշակի ժամանակային կետում). Ընթացիկ հաշվետու ժամանակաշրջանում որևէ հասույթ չի ճանաչվել պայմանագրային պարտավորությունների գծով (2023թ. զրո)

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Արտադրված ապրանքների վաճառք	28,186,371	26,632,404
Գնված ապրանքների վաճառք	8,985,238	8,361,140
Ընդամենը հասույթ	**37,171,609**	**34,993,544**

20 Վաճառքի ինքնարժեք

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Օգտագործված նյութեր և բաղադրիչներ	10,635,500	9,881,350
Գնված ապրանքների վաճառքի արժեք	5,389,141	6,273,258
Անձնակազմի գծով ծախսեր	583,500	539,547
Սպառված պահեստամասեր	371,544	207,553
Հիմնական միջոցների մաշվածություն	361,043	307,386
Կոմունալ և կապի ծախսեր	248,459	294,712
Պատրաստի ապրանքների և անավարտ արտադրանքի պաշարների փոփոխություններ	135,910	77,045
Տեղեկատվական, խորհրդատվական և այլ մասնագիտական ծառայություններ	67,055	52,596
Վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ	50,686	31,458
Պատրաստի ապրանքների և նյութերի կորուստ	18,007	59,505
Այլ ծախսեր	540,347	590,142
Ընդամենը վաճառքի ինքնարժեք	**18,401,192**	**18,314,552**

21 Իրացման ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**2024թ.**	**2023թ.**
Անձնակազմի գծով ծախսեր	2,106,124	1,960,090
Հիմնական միջոցների մաշվածություն	687,045	602,697
Տեղեկատվական, խորհրդատվական և այլ մասնագիտական ծառայություններ	241,850	217,092
Սպառված վառելիք	203,138	177,722
Պատրաստի ապրանքների և նյութերի կորուստ	97,074	68,885
Սպառված պահեստամասեր	64,598	74,134
Կարճաժամկետ վարձակալության հետ կապված ծախսեր	61,457	55,179
Վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ	53,109	70,821
Գործուղումներ և ներկայացուցչություն	37,881	36,045
Կոմունալ և կապի ծախսեր	27,383	27,058
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	27,144	17,791
Ապահովագրության ծախսեր/փոխհատուցումներ (ներառյալ երրորդ կողմին)	17,618	22,227
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկում	14,619	30,911
Այլ ծախսեր	102,195	262,893
Ընդամենը իրացման ծախսեր	**3,741,235**	**3,623,545**

22 Ընդհանուր և վարչական ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**2024թ.**	**2023թ.**
Անձնակազմի գծով ծախսեր	700,357	614,698
Միջֆիրմային կառավարման վճարներ	690,365	681,142
Տեղեկատվական, խորհրդատվական և այլ մասնագիտական ծառայություններ	494,047	390,229
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	88,265	65,226
Հիմնական միջոցների մաշվածություն	48,694	44,325
Վերապատրաստման ծախսեր	24,638	17,615
Գործուղումներ	23,576	15,191
Ապահովագրության ծախսեր/փոխհատուցումներ (ներառյալ երրորդ կողմին)	22,168	13,489
Վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ	20,549	13,101
Կոմունալ և կապի ծախսեր	17,195	18,611
Բանկային միջնորդավճարներ	14,409	13,304
Այլ ծախսեր	89,062	109,978
Ընդամենը ընդհանուր և վարչական ծախսեր	**2,233,325**	**1,996,909**

23 Գովազդային և շուկայավարման ծառայություններ

Հազ. ՀՀ դրամ	**2024թ.**	**2023թ.**
Գովազդային ծախսեր	1,984,455	2,148,568
Անձնակազմի գծով ծախսեր	156,977	91,051
Գործուղումներ և ներկայացուցչություն	10,056	2,724
Տեղեկատվական, խորհրդատվական և այլ մասնագիտական ծառայություններ	7,225	8,676
Այլ ծախսեր	16,470	10,248
Ընդամենը գովազդային և մարքեթինգային ծառայություններ	**2,175,183**	**2,261,267**

24 Այլ գործառնական եկամուտ

Հազ. ՀՀ դրամ	**2024թ.**	**2023թ.**
Ստացված պարտքային նոտաներ	418,926	1,020,975
Այլ եկամուտներ	7,372	149,324
Ընդամենը այլ գործառնական եկամուտ	**426,298**	**1,170,299**

25 Շահութահարկ

(ա) Շահութահարկի գծով ծախսի կազմը

Շահութահարկի գծով ծախսի կազմը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	**2024թ.**	**2023թ.**
Ընթացիկ հարկ	2,230,068	2,201,245
Հետաձգված հարկ	58,814	(178,215)
Տարվա շահութահարկի գծով ծախս	**2,288,882**	**2,023,030**

(բ) շահութահարկի գծով ծախսի համադրում շահույթի կամ վնասի հետ՝ բազմապատկած կիրառելի հարկադրույքով

Ընկերության եկամտի մեծ մասի նկատմամբ կիրառվող շահութահարկի դրույքաչափը կազմում է 18%:

Հազ. ՀՀ դրամ	**2024թ.**	**2023թ.**
Շահույթ մինչև հարկումը	**11,085,705**	**10,185,481**
Տեսական հարկային ծախսը՝ սահմանված 18% դրույքաչափով	1,995,427	1,833,387
Հարկային առումով չնվազեցվող կամ չհարկվող գործարքների ազդեցությունը.		
-Չհարկվող եկամուտ	(31,624)	(89,851)
-Չնվազեցվող ծախսեր	325,079	272,895
Նախորդ տարիների ընթացքում ընթացիկ հարկի գծով պակաս հաշվարկված պահուստ	-	6,599
Տարվա շահութահարկի գծով ծախս	**2,288,882**	**2,023,030**

(գ) Հետաձգված հարկերի վերլուծությունն ըստ ժամանակավոր տարբերության տեսակի

Ժամանակավոր տարբերություններում շարժի հարկային հետևանքը 31 դեկտեմբերի 2024թ. համար մանրամասն ներկայացված է ստորև.

Հազ. ՀՀ դրամ	**1 հունվարի 2024թ.**	**Ծախսագրված /(Վերականգնված) շահույթում կամ վնասում**	**31 դեկտեմբերի 2024թ.**
Ժամանակավոր տարբերությունների հարկային հետևանքը			
Հիմնական միջոցներ	(308,243)	9,082	(299,161)
Ոչ նյութական ակտիվներ	(20,545)	11,233	(9,312)
Տրամադրված վարկեր	(13,201)	10,721	(2,480)
Պաշարներ	19,704	27,326	47,030
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,743	(207,919)	(205,176)
Ավանդային պարտավորություններ	28,365	(11,352)	17,013
Վարձակալության գծով պարտավորություններ	90,956	(20,867)	70,089
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	325,585	122,962	448,547
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	**125,364**	**(58,814)**	**66,550**

25 Շահութահարկ (շարունակություն)

Ժամանակավոր տարբերություններում շարժի հարկային հետևանքը 31 դեկտեմբերի 2023թ. համար մանրամասն ներկայացված է ստորև.

Հազ. ՀՀ դրամ	1 հունվարի 2023թ.	Ծախսագրված/ (վերականգնված) շահույթում կամ վնասում	31 դեկտեմբերի 2023թ.
Ժամանակավոր տարբերությունների հարկային հետևանքը			
Հիմնական միջոցներ	(235,609)	(72,634)	(308,243)
Ոչ նյութական ակտիվներ	(24,076)	3,531	(20,545)
Տրամադրված վարկեր	(7,694)	(5,507)	(13,201)
Պաշարներ	80,631	(60,927)	19,704
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	40,720	(37,977)	2,743
Ավանդային պարտավորություններ	50,216	(21,851)	28,365
Վարձակալության գծով պարտավորություններ	-	90,956	90,956
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	42,961	282,624	325,585
Զուտ հետաձգված հարկային (պարտավորություն)/ակտիվ	**(52,851)**	**178,215**	**125,364**

26 Պայմանական դեպքեր և պարտավորություններ

Իրավական գործընթացներ. Ժամանակ առ ժամանակ բնականոն գործունեության ընթացքում Ընկերության դեմ կարող են ներկայացվել հայցեր: Իր գնահատականների, ինչպես նաև ներքին և արտաքին մասնագիտական խորհրդատվության հիման վրա ղեկավարությունը կարծում է, որ պահանջների գծով ոչ մի էական վնաս չի կարող կրել, որը կգերազանցի սույն ֆինանսական հաշվետվություններում նախատեսված պահուստները:

Հարկային օրենսդրություն. ՀՀ-ում հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնութագրվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն անորոշ են, հակասական և ենթակա են տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են վերանայման և հետաքննության հարկային մարմինների կողմից, որոնք տուգանքներ և տույժեր կիրառելու իրավասություն ունեն: Հաջորդ երեք օրացուցային տարիների ընթացքում հարկային տարին բաց է հարկային մարմինների կողմից վերանայման համար:

Այս հանգամանքները կարող են ՀՀ-ում ստեղծել ավելի էական հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը կարծում է, որ հարկային պարտավորությունները կատարվել են պատշաճ կերպով՝ հիմնվելով Հայաստանի գործող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբեր լինել, և ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը, եթե իշխանությունները հաջողությամբ իրականացնեին իրենց մեկնաբանությունները, կարող էր զգալի լինել:

Կլիմայի փոփոխություն. Ընկերության ղեկավարությունն ի գիտություն է ընդունել կլիմայի փոփոխության հնարավոր ազդեցության վերաբերյալ գլոբալ իրազեկումները և մտահոգությունները: Ներկայումս այս հարցն էական ազդեցություն չի ունեցել ֆինանսական հաշվետվությունների վրա, սակայն ղեկավարությունը շարունակում է վերահսկել այս ոլորտում զարգացումները:

27 Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ընկերությունում ռիսկերի կառավարումն իրականացվում է ֆինանսական, գործառնական և իրավական ռիսկերի ուղղություններով: Ֆինանսական ռիսկը կազմված է շուկայական ռիսկից (ներառյալ՝ արժութային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկը), պարտքային ռիսկից և իրացվելիության ռիսկից: Ֆինանսական ռիսկերի կառավարման առաջնային գործառույթն է ռիսկերի սահմանաչափ սահմանելը և այնուհետև ցանկացած տեսակի ռիսկերի ազդեցությունն այդ սահմանաչափում պահելը: Գործառնական և իրավական ռիսկերի կառավարման գործառույթները նպատակ ունեն ապահովել ներքին քաղաքականության և ընթացակարգերի պատշաճ իրականացումը՝ գործառնական և իրավական ռիսկերը նվազագույնի հասցնելու համար:

27 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Պարտքային ռիսկ. Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, այսինքն՝ ռիսկը, երբ ֆինանսական գործիքի մի կողմը ֆինանսական վնաս է պատճառում մյուս կողմին՝ պարտավորությունները չկատարելու հետևանքով: Պարտքային ռիսկի ենթարկվածությունը առաջանում է Ընկերության կողմից տարաժամկետ վճարման պայմաններով վաճառք իրականացնելու և մյուս կողմերի հետ ֆինանսական ակտիվներ առաջացնող այլ գործարքներ իրականացնելու արդյունքում:

Ընկերության կողմից ըստ ակտիվների դասի պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում և հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	**2024թ.**	**2023թ.**
Տրամադրված վարկեր (Ծանոթագրություն 10)		
-Տրամադրված վարկեր	1,220,786	6,744,143
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (Ծանոթագրություն 12)		
- Առևտրային դեբիտորական պարտքեր, զուտ	354,346	263,969
- Այլ ֆինանսական ակտիվներ	1,093,427	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ծանոթագրություն 13)		
- Ցպահանջ բանկային մնացորդներ	5,717,125	8,614,564
Ընդամենը՝ պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը	**8,385,684**	**15,622,676**

Վարկային ռիսկը մեղմվում է գրավի և այլ վարկային պայմանների բարելավումների միջոցով, ինչպես բացահայտված է Ծանոթագրություն 12-ում:

Ընկերությունը կառավարում է իր պարտքային ռիսկի մակարդակը՝ սահմանաչափեր կիրառելով մեկ գործընկերոջ կամ գործընկերների խմբի գծով ստանձնած ռիսկերի ծավալի համար: Պարտքային ռիսկի սահմանափակումները պարբերաբար հաստատվում են ղեկավարության կողմից: Այդ ռիսկերն անընդհատ վերահսկվում են և ենթակա են տարեկան կամ առավել հաճախակի վերանայման: Ընկերության ղեկավարությունը դիտարկում է չվճարված առևտրային դեբիտորական պարտքերի վերլուծությունն ըստ ժամկետայնության և միջոցներ է ձեռնարկում ժամկետանց մնացորդների մասով: Հետևաբար, ղեկավարությունը տեղին է համարում տրամադրել պարտքային ռիսկի ժամկետայնության վերաբերյալ և այլ տեղեկատվություն, ինչպես բացահայտված է Ծանոթագրություն 12-ում:

Պարտքային ռիսկի կենտրոնացում. Ընկերությունը չի ենթարկվում պարտքային ռիսկի նշանակալի կենտրոնացման:

Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են երկու բանկերում (31 դեկտեմբերի 2023թ. երկու բանկերում), ինչը Ընկերության համար ստեղծում է պարտքային ռիսկի կենտրոնացում:

Ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափում. *ԱՊԿ-ն* իրենից ներկայացնում է դրամական միջոցների ապագա դեֆիցիտի ներկա արժեքի հավանականությամբ կշռված գնահատական (այսինքն՝ միջին կշռված պարտքային կարուստը, տրված ժամանակահատվածում տեղի ունեցող դեֆոլտի համապատասխան ռիսկերով, որոնք օգտագործվել են որպես կշիռ): ԱՊԿ չափումն անկողմնակալ է և որոշվում է հնարավոր արդյունքների շրջանակը գնահատելու միջոցով: ԱՊԿ չափումն իրականացվում է Ընկերության կողմից օգտագործվող հետևյալ չորս բաղադրիչների հիման վրա. դեֆոլտի հավանականություն, դեֆոլտի ռիսկին ենթակա պարտքային պահանջի մեծություն, դեֆոլտից առաջացող վնաս և զեղչման տոկոսադրույք:
Ընկերության մոտեցումը ԱՊԿ չափումը ներառելու վերաբերյալ նկարագրված է ծանոթագրություն 12-ում:

Շուկայական ռիսկ. Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկերի: Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկերի: Շուկայական ռիսկերն առաջանում են. (ա) արտարժույթի, (բ) տոկոսային ակտիվների և պարտավորությունների և (գ) բաժնային արժեթղթերի բաց դիրքերից, որոնք բոլորն էլ ենթարկվում են ընդհանուր և առանձնահատուկ շուկայական շարժերի: Բաց դիրքերը ձևավորվում են հիմնականում հիմնական միջոցների, հումքի և փոխառությունների կրեդիտորական պարտքերի հետ կապված:

27 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ղեկավարությունը սահմանում է ռիսկի այն մակարդակը, որը կարող է ընդունվել, ինչն էլ վերահսկվում է օրական կտրվածքով: Այնուհանդերձ, այս մոտեցման կիրառումը չի կանխում այս սահմանաչափերից դուրս վնասների առաջացումն այն դեպքերում, երբ տեղի են ունենում ավելի նշանակալի շուկայական շարժեր: Ստորև ներկայացված շուկայական ռիսկերի նկատմամբ զգայունությունը որոշվել է հիմք ընդունելով մեկ գործոնի փոփոխությունը՝ անփոփոխ պահելով մնացած այլ գործոնները: Գործնականում այս իրավիճակի տեղի ունենալը հավանական չէ, և մի շարք գործոններում փոփոխությունները կարող են փոխկապակցված լինել, օրինակ՝ տոկոսադրույքի և արտարժույթի դրույքաչափի փոփոխությունները:

Արժութային ռիսկ. Արտարժութային ռիսկի առնչությամբ ղեկավարությունը սահմանում է ռիսկի ազդեցության մակարդակի սահմանափակումներ՝ ըստ արժույթի և ընդհանուր առմամբ: Դիրքերը վերահսկվում են ամսական: Ստորև բերված աղյուսակը ամփոփում է հաշվետու ժամանակաշրջանի վերջում Ընկերության՝ արտարժույթի փոխարժեքի ռիսկի ենթարկվածությունը.

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.			Առ 31 դեկտեմբերի 2023թ.		
	Դրամական ֆինանսական ակտիվներ	**Դրամական ֆինանսական պարտավորություններ**	**Զուտ հաշվեկշռային դիրք**	**Դրամական ֆինանսական ակտիվներ**	**Դրամական ֆինանսական պարտավորություններ**	**Զուտ հաշվեկշռային դիրք**
ԱՄՆ դոլար	805,043	(807,565)	(2,522)	6,467,161	(885,183)	5,581,978
Եվրո	440,966	(1,032,860)	(591,894)	827,683	(728,656)	99,027
ՌԴ ռուբլի	10	(312)	(302)	9	-	9
Ընդամենը	**1,246,019**	**(1,840,737)**	**(594,718)**	**7,294,853**	**(1,613,839)**	**5,681,014**

Վերոնշյալ վերլուծությունը ներառում է միայն դրամական ակտիվները և պարտավորությունները: Ոչ դրամական ակտիվները չեն համարվում էական արժութային ռիսկ առաջացնող ակտիվներ: Հետևյալ աղյուսակը ներկայացնում է շահույթի և վնասի զգայունությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կիրառվող փոխարժեքի հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ Ընկերության ֆունկցիոնալ արժույթի հետ հարաբերակցությամբ, բոլոր այլ փոփոխականները հաստատուն պահելով:

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
	Ազդեցությունը շահույթում կամ վնասում	**Ազդեցությունը շահույթում կամ վնասում**
ԱՄՆ դոլարի արժևորում 5%-ով	(126)	279,099
ԱՄՆ դոլարի անկում 5%-ով	126	(279,099)
եվրոյի արժևորում 5%-ով	(29,595)	4,951
Եվրոյի անկում 5%-ով.	29,595	(4,951)
ՌԴ ռուբլու արժևորում 5%-ով	(15)	-
ՌԴ ռուբլու անկում 5%-ով	15	-

Տոկոսադրույքի ռիսկ. Ընկերությունը ենթարկվում է շուկայական տոկոսադրույքների գերակշռող մակարդակների տատանումների ազդեցությունը իր ֆինանսական դիրքի և դրամական հոսքերի վրա: Ստորև բերված աղյուսակը ամփոփում է Ընկերության ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին: Աղյուսակում ներկայացված են Ընկերության ֆինանսական ակտիվների հանրագումարային մեծությունները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ պայմանագրային տոկոսների վերագնահատման կամ մարման ամսաթվերից առավել վաղ ամսաթվով:

27 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-6 ամիս	6-12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
31 դեկտեմբերի 2024թ. Ընդամենը ֆինանսական ակտիվներ	13,776	-	1,207,010	-	1,220,786
Զուտ տոկոսային զգայունություն առ 31 դեկտեմբերի 2024թ.	**13,776**	**-**	**1,207,010**	**-**	**1,220,786**
31 դեկտեմբերի 2023թ. Ընդամենը ֆինանսական ակտիվներ	89,745	411,537	-	6,242,861	6,744,143
Զուտ տոկոսային զգայունություն առ 31 դեկտեմբերի 2023թ.	**89,745**	**411,537**	**-**	**6,242,861**	**6,744,143**

Ընկերությունը չունի պաշտոնական քաղաքականություն և ընթացակարգեր տոկոսադրույքների ռիսկերի կառավարման համար, քանի որ ղեկավարությունն այդ ռիսկը համարում է աննշան Ընկերության բիզնեսի համար: Ընկերությունը վերահսկում է տոկոսադրույքները իր ֆինանսական գործիքների գծով: Ստորև բերված աղյուսակում ամփոփված են պայմանագրային տոկոսադրույքները համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ հիմք ընդունելով առանցքային ղեկավար անձնակազմի կողմից դիտարկված հաշվետվությունները.

	2024թ.	2023թ.
Տրամադրված վարկեր	3.16 - 5.00	0.49 – 6.13

Իրացվելիության ռիսկ. Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ կազմակերպությունը կարող է ունենալ դժվարություններ իր ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակ: Իրացվելիության ռիսկը կառավարվում է ղեկավարության կողմից ամենօրյա հիմունքով: Մայր ընկերության գանձապետարանի վարչությունը վերահսկում է Ընկերության դրամական հոսքերի ամսական շարժի կանխատեսումները:

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի բանկերի կամ այլ ֆինանսական հաստատությունների հանդեպ վճարման պարտավորություններ: Ընկերության իրացվելիության պորտֆելը բաղկացած է դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, տե՛ս ծանոթագրություն 13: Ըստ ղեկավարության գնահատման՝ իրացվելիության փաթեթի դրամական միջոցները կարող են մեկ օրվա ընթացքում վերածվել կանխիկի՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջը բավարարելու համար: Այն դեպքերում, երբ վճարվող գումարը ֆիքսված չէ, աղյուսակում նշված արժեքը որոշվում է՝ ելնելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա պայմաններից: Արտարժույթով վճարները փոխարկվում են՝ օգտագործելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ սփոթ փոխարժեքը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են պարտավորությունները 31 դեկտեմբերի 2024թ ըստ մնացորդային պայմանագրային մարման ժամկետների: Մարման ժամկետների աղյուսակում բացահայտված գումարներն իրենցից ներկայացնում են պայմանագրային չզեղչված դրամական միջոցների հոսքեր, ներառյալ համախառն վարկային պարտավորությունները և ապագա տոկոսների վճարումները: Նման չզեղչված դրամական հոսքերը տարբերվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներառված գումարից, քանի որ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում նշված գումարը հիմնված է զեղչված դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է.

27 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-6 ամիս	6 - 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
Պարտավորություններ					
Առևտրային կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված պարտավորություններ (Ծանոթագրություն 17)	6,328,595	564,642	-	-	6,893,237
Վարձակալության գծով պարտավորություններ (Ծանոթագրություն 15)	-	46,825	69,097	389,382	505,304
Ընդամենը ապագա վճարումներ, ներառյալ ապագա մայր գումարի և տոկոսների վճարումները	**6,328,595**	**611,467**	**69,097**	**389,382**	**7,398,541**

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-6 ամիս	6 - 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
Պարտավորություններ					
Առևտրային կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված պարտավորություններ (Ծանոթագրություն 17)	4,459,320	901,175	325,230	-	5,685,725
Վարձակալության գծով պարտավորություններ (Ծանոթագրություն 15)	-	42,154	62,205	505,304	609,663
Ընդամենը ապագա վճարումներ, ներառյալ ապագա մայր գումարի և տոկոսների վճարումները	**4,459,320**	**943,329**	**387,435**	**505,304**	**6,295,388**

28 Կապիտալի կառավարում

Կապիտալի կառավարման առումով Ընկերության խնդիրն է՝ ապահովել Ընկերության անընդհատության հիմունքով գործելու կարողությունը, միևնույն ժամանակ բաժնետերերի համար ապահովել եկամտաբերության ընդունելի մակարդակ, հաշվի առնելով այլ գործընկերների շահերը և պահպանելով կապիտալի գծով ծախսերը նվազագույնի հասցնելու համար օպտիմալ կապիտալի կառուցվածք: Կապիտալ կառուցվածքը պահպանելու և կարգավորելու համար Ընկերությունը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների չափերը, բաժնետերերին վերադարձվող կապիտալը, ինչպես նաև թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու նպատակով:

29 Ֆինանսական գործիքների իրական արժեքը

Իրական արժեքի չափման վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի հետևյալ կերպ՝ (i) մակարդակ 1՝ չափումներ ակտիվ շուկայում նույնական ակտիվների կամ պարտավորությունների գնանշվող (չճշգրտվող) գներով, (ii) մակարդակ 2՝ չափման գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալներն ուղղակիորեն (օրինակ՝ գներ) կամ անուղղակիորեն (օրինակ՝ գների հիման վրա ստացված) դիտելի են, (iii) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալներ): Ֆինանսական գործիքները իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակին վերագրելիս՝ ղեկավարությունը կիրառում է դատողություն Եթե իրական արժեքի չափման համար օգտագործվում են էական ճշգրտում պահանջող դիտարկելի տվյալներ, ապա իրական արժեքի տվյալ չափումը վերաբերում է մակարդակ 3-ին: Օգտագործվող տվյալների նշանակալիությունը գնահատվում է իրական արժեքով չափվող ամբողջության համար:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների իրական արժեքները հետևյալն են.

(ա) Իրական արժեքով չգնահատվող ակտիվներ և պարտավորություններ, որոնք իրական արժեքը բացահայտվում է

29 Ֆինանսական գործիքների իրական արժեքը (շարունակություն)

Իրական արժեքների վերլուծությունն ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների և իրական արժեքով չչափվող ակտիվների հաշվեկշռային արժեքի, ներկայացված է ստորև.

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.				31 դեկտեմբերի 2023թ.			
	Մակարդակ			Ընդամենը	Մակարդակ			Ընդամենը
	1	2	3		1	2	3	
ԱԿՏԻՎՆԵՐ								
Տրված վարկեր ամորտիզացված արժեքով	**-**	**1,220,786**	**-**	**1,220,786**	**-**	**6,744,143**	**-**	**6,744,143**
Տրամադրված վարկեր	-	1,220,786	-	1,220,786	-	6,744,143	-	6,744,143
Այլ ֆինանսական ակտիվներ	**92**	**7,164,898**	**-**	**7,164,898**	**265**	**8,878,533**	**-**	**8,878,798**
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	354,346	-	354,346	-	263,969	-	263,969
Այլ ֆինանսական դեբիտորական պարտքեր	-	1,093,427	-	1,093,427	-	-	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	92	5,717,125	-	5,717,217	265	8,614,564	-	8,614,829
Ընդամենը	**92**	**8,385,684**	**-**	**8,385,776**	**265**	**15,622,676**	**-**	**15,622,941**

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.				31 դեկտեմբերի 2023թ.			
	Մակարդակ			Ընդամենը	Մակարդակ			Ընդամենը
	1	2	3		1	2	3	
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐ								
Այլ ֆինանսական պարտավորություններ	**-**	**6,893,237**	**-**	**6,893,237**	**-**	**5,685,725**	**-**	**5,685,725**
- Առևտրային կրեդիտորական պարտքեր	-	6,893,237	-	6,893,237	-	5,685,725	-	5,685,725
Ընդամենը	**-**	**6,893,237**	**-**	**6,893,237**	**-**	**5,685,725**	**-**	**5,685,725**

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ. Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված է գնահատված ապագա դրամական հոսքերի վրա, որոնք ակնկալվում է, որ կստացվեն ընթացիկ տոկոսադրույքներով համանման վարկային ռիսկեր ունեցող և մնացորդային մարման ժամկետներով նոր գործիքների դեպքում:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող պարտավորություններ. Ֆիքսված տոկոսադրույքով և սահմանված մարման ժամկետով գործիքների հաշվարկային իրական արժեքը չափվում է հիմնվելով ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա՝ զեղչված համանման վարկային ռիսկ և մարման մնացորդային ժամկետ ունեցող նոր գործիքների համար գործող ընթացիկ տոկոսադրույքներով:

30 Ֆինանսական գործիքների ներկայացում ըստ չափման կատեգորիաների

Ընկերությունը, ՖՀՄՍ 9-ի «Ֆինանսական գործիքներ» համաձայն, դասակարգում է ֆինանսական ակտիվները հետևյալ կատեգորիաների. (ա) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, (բ) այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ և (գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներն ունեն երկու ենթակատեգորիա. (i), պարտադիր կերպով իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ակտիվներ և (ii) ակտիվներ, որոնք սահմանվել են որպես այդպիսիք սկզբնական ճանաչման ժամանակ: Բացի այդ, ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերը կազմում են առանձին կատեգորիա:

31 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի չեն ունեցել իրադարձություններ, որոնք կարող են պահանջել ճշգրտում կամ բացահայտում Ընկերության 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում: